

ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵՆԱՐԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
Ձեռնարկի մասին	4
Ինչ է Կարգավորիչ ազդեցության գնահատումը.....	5
Ինչու իրականացնել ԿԱԳ	5
ԿԱԳ իրավական դաշտը Հայաստանում.....	6
ԳԼՈՒԽ (I)՝ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ(ԿԱԳ) ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ 7	
ԲԱԺԻՆ 1. Խնդրի սահմանում.....	7
1. Ինչու է դա կարևոր	7
2. Ինչ է նշանակում խնդրի սահմանումը	7
3. Ինչպես սահմանել խնդիրը	8
4. Ինչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթերթը.....	11
ԲԱԺԻՆ 2. Ելակետային սցենարի (առանց գործողության տարբերակի/ոչինչ չանել տարբերակի) մշակումը.....	13
1. Ինչու է դա կարևոր	13
2. Ինչ է նշանակում ելակետային սցենարի ձևակերպումը	13
3. Ինչպես ձևակերպել ելակետային սցենարը.....	13
4. Ինչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթերթը.....	15
ԲԱԺԻՆ 3. Նպատակների սահմանումը.....	17
1. Ինչու է դա կարևոր	17
2. Ինչ է նշանակում նպատակների ճիշտ սահմանումը	17
3. Ինչպես մշակել կատարողական ցուցանիշները	18
4. Ինչպես ճիշտ սահմանել նպատակները.....	19
5. Ինչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթերթը.....	20
ԲԱԺԻՆ 4. Կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքների մշակում	21
1. Ինչու է դա կարևոր	21
2. Ինչը կարող է հանդես գալ որպես /հնարավոր/հավանական գործիք	22
3. Ինչպես բացահայտել գործիքները.....	24
4. Ինչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթերթը.....	26
5-րդ բաժին - Ազդեցության բացահայտում և գնահատում	26
1. Ինչու է դա կարևոր	26
2. Ազդեցության տեսակի բացահայտումը	27
3. Ազդեցության ենթարկված կողմերի բացահայտումը	27
4. Ինչպես են կողմերը ենթարկվում ազդեցության	28

5. Ինչպես գնահատել ծախսերը.....	29
6. Ազդեցության գնահատումը ՓՄՁ-երի վրա	33
7. Ազդեցության գնահատումը մրցակցության և պետական օժանդակության վրա ..	35
8. Ինչպես գնահատել օգուտները:.....	37
9. Ժամանակի հաշվառում. Դիսկոնտավորում	39
10. Ինչպես լրացնել ԿԱԳ հարցաշարը.....	40
6-րդ ԲԱԺԻՆ - Տարբերակների համեմատում և ընտրություն.....	41
1. Ինչու է դա կարևոր	41
2. Համապատասխան մեթոդաբանության ընտրությունը.....	42
3. Տարբերակների ներկայացումը	43
4. Նախընտրելի տարբերակի առաջադրում.....	43
7-րդ բաժին - Ընդունումից հետո հեռանկարների դիտարկում	44
1. Ինչու է դա կարևոր	44
2. Ընդունումից հետո իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումների դիտարկում ..	44
3. Մշտադիտարկման և գնահատման գործողությունների նախագծում/պլանավորում.....	47
4. Կատարողական ցուցանիշների վրա հիմնվում.....	48
II ԳԼՈՒԽ - Տվյալների հավաքագրում և հանրային մասնակցություն	50
Տվյալների հավաքագրում	50
1. Տվյալների հավաքագրման նախագծում/պլանավորում	50
2. Գոյություն ունեցող տվյալների աղբյուրների տարբերակում.....	51
3. Տվյալների բացակայության պարագայում ձեռնարկվող գործողությունները.....	51
4. Տվյալների հավաքագրման մեթոդներ.....	52
Խորհրդակցություն շահառուների հետ/Հանրային քննարկումներ	56
1. Ինչու է դա կարևոր	56
2. Ում հետ իրականացնել խորհրդակցություն.....	57
3. Երբ իրականացնել խորհրդակցություն և ինչի վերաբերյալ:	58
4. Խորհրդակցության արդյունքների օգտագործում.....	59
5. Խորհրդակցական գործընթացի վերաբերյալ զեկուցում	59
Հավելված – ԿԱԳ վերլուծության գործընթացում առաջակվող հնարավոր տարբերակների համեմատության միջոցները (հղում կատարելով բաժին 6-ին).....	61
Ծախս-օգուտ վերլուծություն (ԾՕՎ)	61
1. Ինչ է Ծախս-օգուտ վերլուծություն և երբ այն կիրառել	61
2. Ինչպես կիրառել այն.....	61
Ծախս-արդյունավետություն վերլուծություն (ԾԱՎ)	66
1. Ինչ է Ծախս-արդյունավետություն վերլուծություն, և երբ այն կիրառել	66
Ինչպես ընտրություն կատարել ԾՕՎ-ի և ԾԱՎ-ի միջև.....	69
Բազմաչափանիշ վերլուծություն	70
1. Ինչ է Բազմաչափանիշ վերլուծություն, և երբ օայն կիրառել	70
2. Ինչպես այն կիրառել.....	70
3. Պաշգարանող օրինակներ	72

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարգավորիչ Ազդեցության Գնահատման Ձեռնարկի մասին

Սույն ձեռնարկի նպատակը Կարգավորիչ ազդեցության գնահատումների (այսուհետ՝ ԿԱԳ) նախապատրաստական աշխատանքներում ներգրավված Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) մարմինների և նախարարությունների համապատասխան պաշտոնյաներին ԿԱԳ-ի իրականացման գործընթացում աջակցություն ցուցաբերելն է: Այն հանդիսանում է որպես ուղեցույց հետևյալ գործողությունների իրականացման ընթացքում՝

- ԿԱԳ վերլուծությունների կազմակերպում և իրականացում,
- հատկապես՝ աջակցություն ԿԱԳ Ամփոփաթերթների լրացման ընթացքում,
- աջակցություն հանրային քննարկումների Ամփոփաթերթների և վերանայման ստուգաթերթերի լրացման ընթացքում,
- աջակցություն ԿԱԳ-ի ձևանմուշների լրացման ընթացքում:

Ձեռնարկի Գլուխ I-ը բաղկացած է յոթ բաժիններից, որոնք ընդգրկում են ԿԱԳ-ի իրականացման հիմնական վերլուծական քայլերը՝ (տե՛ս ստորև բերված Վանդակ 1):

Յուրաքանչյուր բաժին նկարագրում է ԿԱԳ-ի նախապատրաստման գործընթացի հիմնական փուլերի կարևորությունը, տրվում են պահանջվող խնդիրների իրականացման հիմնական մեթոդաբանությունների սահմանումներն ու հասկացությունները:

Ձեռնարկի Գլուխ II-ը նվիրված է տվյալների հավաքագրման և հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման գործընթացներին: Վերջիններս ԿԱԳ-ի գործընթացի անբաժանելի մասն են և ապահովում են վերը նշված բոլոր վերլուծական քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՈՒՇՈՒՄ. ԿԱԳ-ի մասին մանրամասները գտեք «European Commission Guidelines and Toolkits». http://ec.europa.eu/smart-regulation/guidelines/toc_guide_en.htm (անգլերենով)
հասցեով

Ի՞նչ է Կարգավորիչ ազդեցության գնահատումը

Կարգավորիչ ազդեցության գնահատումը (այսուհետ՝ ԿԱԳ) կարգավորման որակը ստուգող առանցքային գործիք է: Այն կիրառվում է ինչպես Կառավարությանը ներկայացված փաստաթղթերի, այնպես էլ դրանց հիմնավորման գործընթացի համար: Քաղաքական որոշումների կայացման հարցում ԿԱԳ-ը լրացնող գործիք է:

ԿԱԳ-ի եզրափակիչ հաշվետվությունը համակարգված գործընթացի արդյունք է: ԿԱԳ-ը ապահովում է, որ հասարակական ու տնտեսական խնդիրների լուծման նպատակով ճիշտ հարցեր վերհանվեն և դրանց բնույթի (տեսակի, չափի և զարգացման) վերաբերյալ որոշումներ կայացնողները պատշաճ հիմնավորումներ ներկայացնեն, ինչպես նաև գնահատելով դրանց հավանական ազդեցությունը, սահմանվեն որոշումների առաջարկվող տարբերակների առավելությունները և թերությունները՝ (տես Վանդակ 1):

Վանդակ 1: ԿԱԳ-ԻՆ ԲՆՈՐՈՇ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Որպես կանոն, ԿԱԳ-ի վերլուծությունները պետք է բաղկացած լինեն հետևյալ քայլերից՝

- **Խնդրի** բացահայտումն ու սահմանումը,
- **Ելակետային սցենարի** սահմանումը (գնահատելով առանց գործողության տարբերակը),
- Ցանկալի **նպատակ(ներ)ի շարադրումը**,
- Խնդրի լուծման Կարգավորիչ և ոչ կարգավորիչ **տարբերակների** (այսուհետ՝ տարբերակներ) մշակումը,
- Հնարավոր **ազդեցությունների** վերհանումը և գնահատումը,
- Տարբերակների համեմատությունը կամ համադրումը և նախընտրելի տարբերակի ընտրությունը:

Միջամտության ծախսերը չպետք է գերազանցեն դրանից ստացված օգուտները կամ առնվազն հիմնավորվեն վերջինիս կողմից:

Ինչու՞ իրականացնել ԿԱԳ

Լավ մշակված և համակարգված ԿԱԳ-ը նպաստում է որակյալ որոշումների կայացմանը: Մասնավորապես՝

- **ԿԱԳ-ը նպաստում է տվյալ ոլորտին բնորոշ քաղաքականությունների (սոցիալական, տնտեսական կամ այլ) համատեղ քննարկմանը և մի շարք նպատակների իրականացմանը.** ԿԱԳ-ը միասնական դաշտ է ստեղծում քաղաքականությունների միջև փոխհամաձայնեցված տարբերակը գտնելու հարցում: Այս տեսանկյունից, ԿԱԳ-ը ոչ միայն վերլուծական, այլ նաև ուղղորդող գործիք է, որը կարող է հաշվի առնել տարբեր շահեր:
- **ԿԱԳ-ը բարձրացնում է կայացվող որոշումների որակը՝ տեղափոխելով շեշտադրումը ձևական մոտեցումներից դեպի ապացուցողական մոտեցումներ.** Քաղաքականության մշակման շրջափուլի սկզբում համակարգված հարցադրումների իրականացումը հեշտացնում է քաղաքականության մշակումը, բացահայտում է պատճառահետևանքային կապերը և հավանական ազդեցությունները, ընտրում, համադրում և համեմատում է

քաղաքականության մշակման տարբերակները, հաշվի է առնում որոշման մշակման ընթացքում չնախատեսված հետևանքները: Այն օգնում է նվազեցնել օրենսդրական կարգավորման ռիսկերը: Ավելին, ԿԱԳ-ը համակարգում է հանրության տարբեր շերտերի շահերը՝ դրանով իսկ ապահովելով փոխհամաձայնեցված տարբերակների բացահայտումը և պահանջվող համադաշնեցումը: Այն օգնում է հասնել քաղաքական համաձայնության, վերացնել ոլորտային շահերով առաջնորդվելու կարծրատիպը՝ դրանով իսկ սահմանափակելով կարգավորման ռիսկերը:

- **ԿԱԳ-ն օգնում է հասկանալ կառավարության կողմից ձեռնարկվող գործողությունների իրական ազդեցությունը.** ԿԱԳ-ը պահանջում է որոշում կայացնողներից գնահատել տվյալ քաղականության միջամտության անհրաժեշտությունը և արդյունավետությունը: Տարբեր կարգավորումներում կիրառվող ծախսերի և օգուտների համադրման մեթոդական բազան կատարելագործելով՝ ԿԱԳ-ը կարող է նպաստել օրենսդրական կարգավորման շրջանակներում գերակայությունների և իրավական դաշտի ձևավորմանը: Այն օգնում է ռացիոնալ տեղաբաշխել ռեսուրսները, նվազեցնել հնարավոր ծախողման ռիսկը՝ հրաժարվելով պակաս արդյունավետ կարգավորումներից և կանգ առնել առավել արդյունավետ տարբերակների վրա:
- **ԿԱԳ-ը բարձրացնում է թափանցիկությունը և կառավարության հաշվետվողականությունը.** ԿԱԳ-ը հնարավոր է դարձնում ավելի շրջահայաց և «ի նպաստ օգտագործողի» որոշումների կայացումը: Այն դեպքում, երբ ԿԱԳ-երում պատշաճ կերպով հաշվի են առնվում հանրային քննարկումների արդյունքները, ապա այդ ԿԱԳ-երը կարող են օգնել տնտեսվարող սուբյեկտներին և քաղաքացիներին օգտվելու քաղաքականության և կարգավորման տարբերակների ընտրության մասին իրենց իրազեկված լինելու իրավունքից: Սա նպաստում է նաև կարգավորման ծախսերի նվազեցմանը: Այստեղից բխող երեք անմիջական հետևանքներն են՝ 1) որոշում կայացնողների կատարած աշխատանքի արդյունքների պատշաճ մակարդակով ընդունում և ճանաչում, 2) պետական մարմինների հանդեպ վստահության բարձրացում և 3) կարգավորման բարձր կատարողականության ապահովում:

ԿԱԳ իրավական դաշտը Հայաստանում

- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 27.1:

ԳԼՈՒԽ (I)

ԿԱԳ-Ի ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

ԲԱԺԻՆ 1. Խնդրի սահմանում

1. Ինչու՞ է դա կարևոր

Խնդրի սահմանումը կարևորագույն քայլն է ԿԱԳ-ի նախապատրաստման գործընթացում: Եթե խնդիրը հստակ սահմանված չի, շատ հավանական է, որ ճիշտ լուծումներ չառաջակվեն: Ոչ մի վերլուծություն, անկախ նրա բարդության աստիճանից, չի կարող հաջողվել, եթե խնդիրը պատշաճ կերպով սահմանված չի: Հետևաբար, կարևոր է, որ այս քայլին (Խնդրի սահմանում) տրամադրվի համարժեք ժամանակ և ռեսուրսներ:

2. Ի՞նչ է խնդրի սահմանումը

Խնդրի սահմանման համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Որո՞նք են ի հայտ եկած խնդրի դրսևորումները և դրանց պատճառված վնասը/ կորուստը,
- Որո՞նք են խնդրի դրսևորումների հետևանքները: Որքա՞ն մեծ/ լուրջ / հրապապ են դրանք,
- Ո՞վ է փուժում, ինչպիսի՞ եղանակներով և ի՞նչ աստիճանի,
- Որո՞նք են խնդրի դրսևորումների հիմնական պատճառները,
- Ո՞վ է պնդում, որ այդ դրսևորումներն առկա են:

Վանդակ 2. Ինչպես խնդրի սահմանման ընթացքում խուսափել ընդհանուր սխալներից

- Խուսափեք խնդիրը առանց հստակ սահմանումների կամ անորոշ և անհասկանալի հասկացություններով արտահայտելուց (օր.՝ «Բացակայում են ենթակառուցվածքները»):
- ՓՈԽԱՐԵՆԸ ԵՂԵՔ ՀՍՏԱԿ. «Ա-ից դեպի Բ տանող ճանապարհը չի կարող կրել ծանր բեռնատարներ»:
- Եզրակացության մի՛ հանգեք՝ առանց խնդրի դրսևորումների ուսումնասիրության (օր.՝ «Չկա ֆինանսավորում, հետևաբար, երեխաները չեն գնում դպրոց»):
- ՓՈԽԱՐԵՆԸ ԲԱՅԱՀԱՅՏԵՔ ԽՆԴՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. «Երեխաները չեն գնում դպրոց» (պատճառը կարող է լինել բարձր դպրոցական վճարները կամ այլ գործոններ, որոնք կապված չեն փողի հետ, օրինակ՝ տրանսպորտային խնդիրները):
- Մի՛ ձևակերպեք որպես խնդիր այն երևույթները, որոնց դրսևորումները բացակայում են (օր.՝ (հյուրանոցային գործունեության լիցենզավորման ներդրման պահանջ/որևիցե դրսևորում չունի)
- Մի՛ կատարեք խնդրի դրսևորումների վերաբերյալ ընդհանուր դատողությունների վրա հիմնված հայտարարություններ, որը չի բերելու խնդրի ձևակերպանը և դրա լուծմանը վերաբերող տարբերակների մշակմանը (օր.՝ «Ենթակառուցվածքները թույլ են»)
- Տարբերեք խնդրի դրսևորումները հնարավոր լուծումներից (օր.՝ Բացակայում է «Ջեռուցման համակարգերի» վերաբերյալ օրենքը):

Օրենքի մշակումը երբեք խնդիր չէ, այն տրված խնդրի հնարավոր *լուծում է*: Կարող են լինել նաև այլ լուծումներ, ինչպիսիք են՝ կատարողականի մակարդակի բարձրացում, պատժամիջոցների խստացում, առկա իրավական դաշտի պարզեցում կամ կրթական և տեղեկատվական քարոզչություններ, և այլն:

Խնդրի սահմանումից հետո խնդրի դրսևորումները փոխակերպվում են խնդրի հետևանքների:

3. Ինչպե՞ս սահմանել խնդիրը

Խնդիրը սահմանվում է դրսևորումների, դրանց պատճառների և հետևանքների վերլուծության և արդյունքները համադրելու ու հաշվի առնելու միջոցով: ԿԱԳ վարժության առաջին կարևորագույն քայլը խնդրի դրդիչների կամ հիմնական խորքային պատճառների բացահայտումն ու հաստատումն է, թե ինչպես են այդ հատուկ գործոնները հանգեցրել խնդրի առաջացմանը:

Ուստի, Դուք պետք է միշտ անդրադարձ կատարեք վերհանված և հստակեցված պատճառներին և գտնեք դրանց միջև օբյեկտիվ պատճառահետևանքային կապերը: Դրան հասնելու լավագույն տարբերակը, այսպես կոչված, «խնդրի ծառի» կառուցման մոտեցումն է: Օգտագործելով այս գրաֆիկական եղանակը՝ խնդիրը կարող է «ճյուղավորվել» պատճառների և հետևանքների:

Համապատասխանաբար, խնդրի ծառը օգնում է Ձեզ մասնավորապես՝

- հստակեցնել բոլոր առկա խնդիրները, որոնք վերաբերում են վերլուծության ենթակա թեմային (կենտրոնացեք իրական խնդիրների, այլ ոչ թե պոտենցիալ կամ ապագա խնդիրների վրա),
- տարբերակել խնդրի դրսևորումները, դրանց պատճառները և հետևանքները՝ սահմանել դրանց ստորադասությունը:
- բացահայտել ազդեցության ենթարկված խմբերը:

Վանդակ 3. Ինչպես կառուցել «խնդրի ծառը»

- Գրեք Ձեր խնդիրը մեջտեղում,
- Գրեք բոլոր պատճառները վերին մասում,
- Գրեք բոլոր հետևանքները ներքևի մասում,
- Կարող եք օգտագործել շրջանակներ մեկնաբանություններ ավելացնելու համար:

Ձեր խնդրի պատճառները կներկայացվեն ծառի վերին մասում («ճյուղերում»): Նրանք կարող են լինել այնքան, որքանով դրանք առկա են և այնքան մանրամասն, որքան անհրաժեշտ է: Դուք կարող եք ունենալ անմիջական և երկրորդական պատճառներ: Դրանք վերհանելիս՝ ամեն անգամ հարցրեք՝ «... և ինչու՞ է դա այդպես»:

ԿԱԳ-ի շրջանակներում վերլուծման ենթակա պատճառները որոշվում են և կախված են ԿԱԳ-ի գերակայություններից, կարողություններից և տրամադրության տակ գտնվող միջոցներից:

Վանդակ 4. Խնդրի սահմանման օրինակ Ճանապարհային երթևեկության խափանումը Երևան քաղաքի կենտրոնում

Մատչելիությունն ու շարժունակությունը կարևոր գործոններ են քաղաքի կյանքի համար: Նրանք անմիջականորեն որոշում են կյանքի որակը, քաղաքացիների բավարարվածության աստիճանը և քաղաքի տնտեսական զարգացման հնարավորությունները: Վիճակագրական տվյալները և ամենօրյա հետազոտությունները ցույց են տալիս, որ ճանապարհային երթևեկության ծանրաբեռնվածությունը Երևանում աճում է:

Ինչպե՞ս դուք կարող եք սահմանել խնդիրը:


Օգտագործելով խնդրի ծառի կառուցման մոտեցումը՝ դուք կարող եք բացահայտել խնդրի դրսևորումները, դրանց հետևանքներն ու պատճառները:

Ճանապարհային խցանումներն առաջացնում են որոշ բացասական հետևանքներ, որոնք ունեն տնտեսական, սոցիալական / առողջապահական և բնապահպանական բնորոշ հիմքեր: Դրանք հստակեցնելով՝ ակնհայտ է դառնում խնդրի մեծությունը և լրջությունը/ հրատապությունը:

Ճանապարհային խցանումների պատճառները Երևանում կարող են լինել տարբեր, բազմաթիվ և ունենալ զանազան բնույթ: Ամենայն հավանականությամբ, խցանումների առաջացումը կարող է հետևանք լինել տարբեր պատճառների համակցության: Ամեն դեպքում անհրաժեշտ է ուսումնասիրել դրանցից յուրաքանչյուրը, որպեսզի ներկայացվի խնդրի առաջացմանը նպաստող առաջնահերթ և որոշիչ գործոնները: Սա օգնում է ավելի խստապահանջ կերպով ուսումնասիրել պատճառահետևանքային մեխանիզմները և հասկանալ, թե որտեղ պետք է կենտրոնանա՞ցնել ջանքերը խնդրի լուծման համար:

Ներկայացված ծառը միայն օրինակ է, թե ինչպես կարելի է մոտենալ խնդրին: Կարևոր է հասկանալ, թե արդյոք խցանումները առաջանում են առավել զբաղված ժամերին, թե երթևեկությունը հավասարապես ծանրաբեռնված է ողջ օրվա ընթացքում: Բացահայտելով, թե խցանումների ժամերին ովքեր են ճանապարհին և ինչպես են այդ խցանումների հնարավոր հետևանքներն ազդում ճանապարհային երթևեկությունից օգտվողների վրա՝ Դուք կկարողանաք ավելի դյուրին սահմանել խնդիրը:

Օրինակ, եթե պարզվի, որ խցանման մեջ գտնվող ավտոմեքենաները հիմնականում տեղափոխում են երեխաներին դեպի դպրոց և դպրոցից տուն, ապա համապատասխանաբար բարձրացվում է կայանատեղիների անհամապատասխանության հարցը: Եթե խցանումները առաջանում են ոչ թե առավել զբաղված ժամերին, այլ օրինակ՝ շաբաթ երեկոյան, ապա խնդիրն ավելի շուտ կապված է վթարների հետ, որոնք կարող են առաջանալ, ասենք, ակումբներից հաճախող հարբած երիտասարդ վարորդների պատճառով:



Հիշեք, որ խնդիրը կարող է առաջանալ/ազդել տարբեր ձևերով տնտեսության տարբեր հատվածների և տարբեր սոցիալական խմբերի վրա: Ստորև ներկայացված աղյուսակը Ձեզ կօգնի բացահայտելու տարբեր տիպաբանության սուբյեկտներին, ովքեր կարող են հաշվի առնվել ձեր խնդրի սահմանման ընթացքում:

Աղյուսակ 1. Սոցիալական և տնտեսական խմբերի տարբերակում

Սոցիալական տարբերակում				Տնտեսական տարբերակում Տարիքային խմբեր
Տարիքային խմբեր	Ըստ եկամտի բաշխվածության խմբեր	Տարիքային խմբեր	Ըստ եկամտի բաշխվածության խմբեր	
<ul style="list-style-type: none"> ▪ Երեխաներ և երիտասարդներ ▪ Տարեցներ ▪ Հատուկ տարիքային խումբ 	<ul style="list-style-type: none"> ▪ Ցածր եկամուտ ունեցող անձինք ▪ Տնտեսապես ոչ ակտիվ անձիք ▪ Գործազուրկներ ▪ Անաշխատունակ ներ 	<ul style="list-style-type: none"> ▪ Երեխաներ և երիտասարդներ ▪ Տարեցներ ▪ Հատուկ տարիքային խումբ 	<ul style="list-style-type: none"> ▪ Ցածր եկամուտ ունեցող անձինք ▪ Տնտեսապես ոչ ակտիվ անձիք ▪ Գործազուրկներ ▪ Անաշխատունակ ներ 	<ul style="list-style-type: none"> ▪ Երեխաներ և երիտասարդներ ▪ Տարեցներ ▪ Հատուկ տարիքային խումբ

4. Ինչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթեթը

Խնդրի ծառի վերլուծությունը մեկնարկման կետն է ԿԱԳ Ամփոփաթեթի Բաժին 2 հարցերին պատասխանելու համար:

Այս Բաժինը պարտադիր լրացվում է յուրաքանչյուր ԿԱԳ մշակելիս:

Չնայած, որ խնդրի սահմանումը կարող է սահմանափակվել որոշ որակական բնույթի տեղեկատվության ներկայացմամբ, այնուամենայնիվ, Դուք պետք է ձգտեք հնարավորինս հիմնավորել Ձեր փաստարկները քանակական տվյալներով՝ նաև հղումներ կատարելով հատուկ ապացույցների աղբյուրներին: Դրանք ներառում են վիճակագրությունից և վերլուծություններից ստացված տվյալներ, որոնք հիմնված են արդեն իսկ ձեռք բերված կամ դեռևս չճշտված տվյալների վրա:

ՀՈՒՇՈՒՄ. Հետագա տեղեկատվության համար հղում կատարեք սույն Ձեռնարկի «Տվյալների հավաքագրում և հանրային քննարկումներ» Գլուխ (II)-ի վրա

Օրինակ, «խնդրի մեծությունը կամ ուժգնությունը» (տես Ամփոփաթեթի հարց 2) կարող է գնահատվել տարբեր եղանակներով: Դուք կարող եք հիմնվել տարբեր չափման համակարգերի վրա (ցուցանիշներին) այն արտահայտելու համար, օրինակ՝

- Ազդեցության ենթարկված ձեռնարկությունների թիվը (ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտների ընդհանուր թվում կամ տվյալ տնտեսության ոլորտում զբաղված սուբյեկտների թվում),
- ՀՆԱ-ի վրա խնդրի ազդեցության չափը,
- խնդրի հետևանքով ազդեցության ենթարկված բնակչության թիվը և այլն:

Այնուհետև կարող եք ընտրել համապատասխան գնահատման համակարգ խնդրի մեծությունը չափելու համար: Օրինակ, Դուք կարող եք սահմանել, որ խնդիրը «փոքր» է, եթե այն ազդում է Հայաստանում գործող մինչև 5,000 ձեռնարկությունների վրա, «միջին»՝ եթե այն ազդում է մինչև 30,000 ձեռնարկությունների վրա, և «մեծ», եթե ազդում է ավելի քան 30,000 ձեռնարկությունների վրա (եթե ընդհանուր գրանցված ձեռնարկությունների թիվը կազմում է մոտ 60,000):

Երբ անհրաժեշտ է գնահատել «խնդրի հրատապությունը» (տես Ամփոփաթերթի հարց 3), պետք է դիտարկեք, օրինակ, անսպասելի իրավիճակը՝ թաքնված խնդրի հանկարծակի սրմամբ կամ վթարային իրավիճակի առաջացմամբ: Հրատապությունը կարող է նաև գնահատվել, հաշվի առնելով տվյալ հարցի վերաբերյալ հակասությունները հասարակության շրջանում, այսինքն՝ որքանով է խնդիրը բախվում հասարակական շահերին՝ որպես մեկ ամբողջություն, հանրային պաշտպանությանը, կամ արդյոք համապատասխան շահառուների դիրքերը հակասական են խնդրի շուրջ: Խնդրի քաղաքական կողմը կարող է հանդես գալ որպես հրատապության մեկ այլ գործոն, օրինակ, արդյոք խնդիրը ազդեցություն ունի կամ չունի կառավարության ռազմավարական առաջնահերթությունների վրա:

ԲԱԺԻՆ 2. Ելակետային սցենարի (առանց գործողության տարբերակի/ոչինչ չանել տարբերակի) մշակումը

1. Ինչու է դա կարևոր

ԿԱԳ-ը համեմատական վերլուծության արդյունքում կատարվող վարժություն է, որը գնահատում է, թե ինչ կպատահի ապագայում, եթե Կառավարությունը միջամտի՝ համեմատած նրան, թե ինչ կպատահի, եթե Կառավարությունը չմիջամտի: Դուք, տրամաբանորեն, խորհուրդ կտայիք Կառավարությանը կատարել որևէ գործողություն միայն այն ժամանակ, երբ առկա լինեն բավարար ապացույցներ, որ այդ գործողությունը բերելու է ավելի լավ արդյունքի, քան ներկայիս իրավիճակն է:

Ելակետային սցենարի սահմանումը սկզբունքորեն կապված է «Խնդրի սահմանման» հետ: Եթե Դուք պարզել եք խնդրի էությունը, Դուք պետք է հստակեցնեք, թե ինչպես այն կզարգանա և արդյոք պահանջվում է Կառավարության միջամտությունը, թե ոչ:

2. Ի՞նչ է նշանակում ելակետային սցենարի ձևակերպումը

Ելակետային սցենարի նպատակն է բացատրել, թե ինչպես ներկա իրավիճակը կզարգանա առանց լրացուցիչ միջամտության: Այսինքն, այն «առանց քաղաքականության փոփոխման» սցենարն է, որը պատասխանում է հետևյալ հարցին՝ *«Ի՞նչ կպատահի, եթե ոչինչ չարվի»:*

3. Ինչպես սահմանել ելակետային սցենարը

Ներկա իրավիճակի նկարագրությունը ներկայացնելիս նախ պետք է հաշվի առնել հետևյալը՝

- եթե վերհանված խնդիրը կարգավորված չէ որևէ հատուկ քաղաքականությամբ, ապա այս դեպքում ելակետային սցենարը՝ «առանց քաղաքականության» կարգավիճակի շարունակումն է: Երբ առկա է քաղաքականություն, ելակետայինը՝ ներկա քաղաքականության շարունակությունն է՝ առանց որևէ փոփոխության, այսինքն, առանց որևէ նոր կամ լրացուցիչ միջամտության,
- «առանց քաղաքականության» ձևը ներառում է ընդունված, բայց դեռևս չիրականացված օրենսդրության սպասված ազդեցությունները,
- հիշեք, որ կարող են լինել դեպքեր, երբ որոշ նախաձեռնություններ արդեն ձեռնարկվել են խնդրի լուծման ուղղությամբ, օրինակ՝ ԵՄ կամ հարևան երկրներում կարգավորումները, որոնք կարող են խնդրի հարցում լուրջ զարգացումներ ապահովել: Այս դեպքում նման նախաձեռնությունները պետք է նշվեն ելակետային վերլուծության մեջ, նշելով, թե ինչպիսի ազդեցություններ դրանք կունենան:

Վանդակ 5. Ելակետային սցենարի ձևակերպում. Հիմնական հարցեր

- Արդյո՞ք խնդիրը մոտ է իր լուծմանը, թե այն դառնում է ավելի խնդրահարույց: Ե՞րբ: Ինչու՞:
- Որքա՞ն է այս սցենարների տեղի ունենալու հավանականությունը:
- Արդյո՞ք կան անդառնալի հետևանքներ, որոնք խնդիրը կդարձնեն գործնականում ավելի լուրջ կամ հրատապ:

Այս հարցերին պատասխանելիս, Դուք պետք է հստակեցնեք, թե ինչ ենթադրություններ եք արել, ինչ տվյալներ եք օգտագործել և ինչու:

Հարկ է նշել, որ իրատեսական ելակետային սցենարը պետք է հիմնվի միայն քանակական փաստերի վրա և ներկայացվի **դրանց միջոցով՝** զարգացման **համապատասխան ժամանակահատվածներով** (ոչ շատ երկար, ոչ շատ կարճ):

Վանդակ 6. Ճանապարհային երթևեկության խցանման օրինակը. Նկատառումներ Ելակետային սցենարի վերաբերյալ

Վերադառնալով մեր հիմնական օրինակին (Երևանում ճանապարհային խցանումներին)՝ պատկերացրեք, որ մեր խնդրի սահմանումը հանգեցնում է մեզ այն եզրակացությանը, որ ճանապարհային երթևեկությունը հատկապես ծանրաբեռնված է լինում շաբաթ երեկոյան՝ մեքենա վարելու պակաս փորձ ունեցողների պատճառով (երիտասարդ վարորդներ):

Ահավասիկ, եթե գիտենք, որ պետական մարմիններն անցյալ ամիս ավրոհողի չարաշահման վերաբերյալ տեղեկատվություն և կրթական քարոզչություն են իրականացրել ամբողջ բնակչության շրջանակներում, հատկապես՝ ուշադրություն դարձնելով խմիչքի և մեքենա վարելու խնդիրներին, ապա կարող ենք եզրակացնել, որ այս խնդիրը բավականին տարածված և մասշտաբային է:

Հետևաբար, եթե խնդրի սահմանումով պահանջ է դրված բացահայտելու Երևանում վաղ առավոտյան ժամերին ճանապարհային խցանումների պատճառը և դրա պատճառներից հիմնականը պարզվել է, որ հասարակական տրանսպորտի անբավարարության խնդիրն է, ապա խմիչքի չարաշահմանը և վարորդներին ուղղված կառավարության կրթական քարոզչական գործողությունները, ուղղակի անտեղի են:

Մյուս կողմից, վերլուծության այս փուլում պետք է նաև հաշվի առնենք, թե ինչ տեղի կունենա, եթե ներկա իրավիճակում ոչ մի փոփոխություն չիրականացվի: Մեր օրինակում ենթադրենք, որ վիճակագրական տվյալները ցույց են տվել վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանի բնակչության տեղաբաշխված եկամտի կայուն աճ, և փաստվել է, որ այդ գումարների էական մասը առավելապես ներդրվել են ավտոմեքենաներ գնելուն (ենթադրենք միայն Երևանում նախատեսվում է տարեկան 5% աճ նոր գրանցվող մեքենաների համար): Սա կարող է բացատրվել, օրինակ, երիտասարդ վարորդների կողմից վարորդական քննությունը բարեհաջող հանձնելու արդյունքում սեփական ավտոմեքենա ունենալու՝ կարգավիճակի փոփոխության ձգտումով: Այդուհանդերձ, փորձը ցույց է տալիս, որ մեքենաներ գնելու միտումը ոչ միայն կապված է «հատուկ կարգավիճակ» ձեռք բերելու ազդեցությամբ, այլ նաև Երևանում աշխատողների թվի աճով պայմանավորված և մեքենաների օբյեկտիվ պահանջի անհրաժեշտությամբ: Քանի որ Երևանը, որպես մայրաքաղաք կենտրոնացնում և ներգրավում է ավելի ու ավելի շատ աշխատուժ երկրում, իսկ գործող ենթակառուցվածքներն ու հանրային ծառայությունները բավականաչափ չեն համապատասխանում տնտեսական և սոցիալական առաջարկի աճի այս տեմպին, ապա ամեն տարի ավելի շատ քանակությամբ անհատական ավտոմեքենաներ են օգտագործվում: Այս հիմքերից կարող ենք եզրակացնել, որ ճանապարհային խցանումների խնդիրը Երևանում ավելի է ծանրանում և հրատապ դառնում, եթե ոչինչ չարվի այդ ամենը կանխելու համար: Սա է իմ ելակետային սցենարը (առանց գործողության տարբերակ):

4. ԻՆչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթեթը

Խնդրի զարգացման հետագա փուլերը պետք է պատշաճ հիմնավորված ու գնահատված լինեն (ԿԱԳ Ամփոփաթերթի Բաժին 2 հարցերը): Այս քայլի հիմնական նպատակը՝ Կառավարության կողմից գործողության անհրաժեշտության պարզ հիմնավորումն է:

Որպես կանոն, կարճաժամկետ հետևանքները առաջանում են 1 տարվա ընթացքում, միջնաժամկետը՝ 2-5 տարվա ընթացքում և երկարաժամկետը՝ 5-10 տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ 3. Նպատակների սահմանումը

1. Ինչու է դա կարևոր

Առանց քաղաքականության նպատակների հստակ ըմբռնման դժվար է որոշել ձեռնարկվելիք գործողությունները, իսկ առավել ևս՝ տարբերակների նպատակահարմարությունը որոշելը: Հստակորեն ձևակերպված նպատակները երաշխավորում են ապագա գործողությունների պատշաճ հիմնավորումը:

Այլ կերպ ասած, չափազանց կարևոր է որոշել և սահմանել նպատակները, քանի որ դրանցով են պայմանավորված Կառավարության գործողություններից ակնկալվող հիմնական օգուտները և, համապատասխանաբար, լուծումային տարբերակների որոշումը: Ցանկացած միջամտություն պետք է ունենա հստակ նպատակներ, որոնք անմիջականորեն կապված են բացահայտված խնդրի լուծման հետ և, միևնույն ժամանակ, համահունչ են Կառավարության ռազմավարական և ծրագրային նպատակների հետ:

Հետևաբար, նպատակների սահմանումը՝

- օգնում է ցույց տալ քաղաքականության համապատասխանությունը և հետևողականությունը,
- օգնում է բացահայտել գործողությունների հեռանկարային զարգացումը և հեշտացնում քաղաքականության տարբերակների համադրումը,
- դարձնում է վերահսկելի քաղաքականության իրագործումը և ձեռքբերումների կամ անցանկալի հետևանքների գնահատումը:

2. Ի՞նչ է նշանակում նպատակների ճիշտ սահմանումը

Խնդրի լուծման հնարավոր առաջարկները պետք է գնահատվեն, այսպես կոչված, **կատարողական նպատակների** միջոցով: Դուք պետք է սահմանեք նպատակներին հասնելու գործողությունը (կամ անգործությունը) կատարողականի չափելի ցուցանիշների միջոցով:

Ավելին, նպատակները կարող են լինել **ընդհանուր, հատուկ և գործառնական**:¹ Երբ Դուք սահմանում եք նման չափորոշիչներ, համոզված եղեք, որ դուք հաստատում եք հստակ կապեր՝

- նպատակների և խնդրի, ինչպես նաև հիմնական պատճառների միջև,
- նպատակների միջև, որպեսզի դրանք չհակասեն միմյանց:

Աղյուսակ 2. Նպատակների տեսակները

Ընդհանուր նպատակներ	<ul style="list-style-type: none">• Սրանք ընդհանուր քաղաքականության նպատակներն են և հանդիսանում են վերջնական արդյունքը:• Սրանք պետք է ստիպեն քաղաքականություն մշակողներին հաշվի առնել ողջ առկա փոխլրացնող քաղաքականությունները, որոնք համատեղ ազդում են
----------------------------	--

¹ Հետևյալ աղյուսակը վերցվել է «the European Commission Guidelines on Impact Assessment», 2009, էջ.26.

	<p>վերջնական արդյունքների վրա: Ընդհանուր նպատակ է, օրինակ՝ բարելավել Հայաստանի ներդրումային միջավայրը:</p>
Հատուկ նպատակներ	<ul style="list-style-type: none"> • Սրանք հաշվի են առնում քաղաքականության միջամտության ներքո գտնվող հատուկ տիրույթը և դրա մասնավոր բնույթը: • Սրանք քաղաքականության անմիջական նպատակներն են, որոնց միջոցով և հաշվին հասնում են ընդհանուր նպատակների իրագործմանը: <p>Օրինակ, բիզնես գործընթացների կարգավորման հստակեցումը, որոնք անհրաժեշտ են Հայաստանում ներդրումային ծախսերը նվազացնելու համար:</p>
Գործառնական նպատակներ	<ul style="list-style-type: none"> • Սրանք նպատակներ են, որոնք ներկայացված են վերջնական արդյունքի կամ գործողությունների սուբյեկտի տեսքով: • Այս նպատակները սովորաբար առաջանում են գործողությունների անմիջական արդյունքում՝ որպես ապրանք կամ ծառայություն: <p>Մեր օրինակում՝ հարկերի և վճարների նվազեցումն է մինչև 30%, կամ սկսնակ բիզնեսի գրանցման համար առավելագույն ժամկետի սահմանումը մինչև 5 աշխատանքային օր:</p>

3. Կատարողական ցուցանիշների զարգացումը

«Այն ինչ չափելի է՝ իրականացվում է»: Նպատակներից բխում են թիրախային մակարդակները և ժամկետները: Որպեսզի համոզվենք, որ սահմանված գործառնական նպատակները կիրառվում են ամբողջությամբ և ժամանակին, կարևոր է, որ դուք արտահայտեք դրանք կատարողական ցուցանիշների միջոցով: Դրանք պետք է սահմանվեն յուրաքանչյուր նպատակի համար առանձնահատուկ ձևով:

Ձեր ցուցանիշների նախագծման մեջ մեկ այլ կարևորագույն գործոն է տվյալների հավաքագրման գործընթացի թեթևացումը:

Որպեսզի համոզված լինեք, որ կատարողականի ցուցանիշները ճիշտ են օգտագործվում, դրանք պետք է՝

- լինեն համապատասխան, այսինքն, սերտորեն կապված լինեն նպատակների հետ,
- լինեն օբյեկտիվ, հեշտ մեկնաբանվեն և ազատ լինեն շահարկումից,
- լինեն քիչ թվով և հեշտ մշտադիտարկման համար (տվյալների հավաքագրումը պետք է հնարավոր լինի նվազագույն ծախսերով),
- լինեն ընդունելի (աշխատակիցների կողմից, ինչպես նաև շահագրգիռ կողմերի համար),

- ունենան անմիջական ազդեցություն (օր.՝ գովասանք և նկատողություն, վարչական և ֆինանսական պատժամիջոցներ):

Վանդակ 7. Կատարողական ցուցանիշներ. Որոշ օրինակներ

ՔԱՆԱԿԱԿԱՆ

- մահացությունների թիվը / ճանապարհային պատահարները,
- երեխաների տոկոսը, ովքեր դպրոցը ավարտել են ճշգրիտ կամ հումանիտար գիտությունների որակավորմամբ,
- բիզնեսի մեկնարկային ժամանակը,
- հարկերը ժամանակին մուծող բիզնեսների տոկոսը,
- առողջապահության և անվտանգության օրենսդրական պահանջներին համապատասխանող շինարարական ընկերությունների քանակի փոփոխությունը:

ՈՐԱԿԱԿԱՆ

- քաղաքացիների/բիզնեսների բավարարվածության մակարդակը,
- կյանքի որակի բարելավումը / կառավարություն- բիզնեսի փոխհարաբերությունների հեշտացումը,
- լրատվական ծածկույթի (բացասականից դեպի դրական) փոփոխությունը:

4. Ինչպես ճիշտ սահմանել նպատակները

Նպատակների սահմանման լավագույն տարբերակը՝ ՍՄԱՐԹ (S.M.A.R.T.) մեթոդի կիրառումն է, ըստ որի նպատակները պետք է լինեն

- **Տ (S) = ՏԱՏՈՒԿ (SPECIFIC).** Նպատակները պետք է լինեն որոշակի և հստակ, որպեսզի չենթարկվեն տարատեսակ մեկնաբանությունների: Դրանք պետք է ամբողջությամբ հասկանալի լինեն:
- **Չ (M) = ՉԱՓԵԼԻ (MEASURABLE).** Նպատակները պետք է սահմանվեն ցանկալի իրավիճակը չափելի ձևաչափով ներկայացնելով այնպես, որ հնարավոր լինի ստուգել նպատակի իրագործման փաստը: Նման նպատակները կամ քանակականացված են, կամ էլ հիմնված են տարբեր նկարագրությունների և գնահատականների վրա:
- **Վ (A) = ՎԱՍԱՆԵԼԻ (ACHIEVABLE).** Վարքագծի վրա ազդող նպատակներն ու թիրախները, սահմանված են լավ, եթե դրանց իրականացնողները կարողանում են հասնել այդ նպատակներին և թիրախներին:
- **Վ (R) = ՎԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ (RELEVANT).** Նպատակներն ու թիրախային մակարդակները պետք է լինեն հավակնոտ և հեռանկարային; Նպատակը չպետք է ուղղված լինի միայն զարգացման ընթացիկ պահին առկա խնդիրներին, դա արդյունավետ չէ; Միևնույն ժամանակ, դրանք պետք է իրատեսական լինեն, որպեսզի իրականացնողները հասկանան դրանց իմաստը:

- $\sigma(T) = \sigma_{\text{ԱՄԱՆԱԿԻՑ ԿԱՆՅԱԼ}} (T) = \sigma_{\text{TIME-DEPENDENT}}$. Նպատակներն ու թիրախային մակարդակները մնում են անորոշ, եթե դրանք ամրագրված չեն ֆիքսված ամսաթվով կամ ժամանակահատվածով:

**Վանդակ 8. Ճանապարհային խցանման օրինակ.
ՍՄԱՐԹ նպատակների սահմանում**

Եզրակացությունները, որոնց հանգելու են, դիտարկելով և վերլուծելով խնդրի ծառը, մեծապես կախված է այն բանից, թե ինչ մանդատ ունենք՝ կարգավորող են Ներքին գործերի նախարարությունում կամ Առողջապահության նախարարությունում, թե Երևանի քաղաքապետարանի աշխատակից են: Տարբեր իրավասությունների և քաղաքականության մանդատի շրջանակներում տարբեր էլինում մեր կենտրոնացումը պատճառների վրա:

Ենթադրենք, ես Քաղաքապետարանի հանրային ծառայությունների բաժնի պետն եմ և պատկերացնենք, որ ես հայտնաբերել եմ ծանրաբեռնված աշխատանքային ժամերին ճանապարհային խցանումների հիմնական պատճառը, այն է՝ կառավարության աշխատակազմի շենքերի՝ Երևանի կենտրոնում տեղակայված լինելն է; Այս դեպքում, իմ ազդեցությունը այդ խնդրին կարող է լինել բավականին սահմանափակ, քանի որ ես չունեմ լիազորություններ փոխելու այդ սցենարը: Բայց մյուս կողմից, եթե խցանումները հանրային տրանսպորտի անարդյունավետ օգտագործումն է, ես ունեմ ավելի շատ լծակներ և միջամտության հարթակ:

Համապատասխանաբար, Ս.Մ.Ա.Ր.Թ. մոտեցման համաձայն իմ նպատակների սահմանումը կարող է լինել.

- Ընդհանուր նպատակ. «Ձսպելու խցանումը Երևանում»
- Հատուկ նպատակ. «Նվազեցնել մեքենաների քանակը, որոնք մուտք են գործում, շրջանառվում և դուրս են գալիս քաղաքի կենտրոնից»
- Գործառնական նպատակ. «Մինչև 2016 թվականի դեկտեմբերը բարձրացնել ավտոբուսներում նստատեղերի միջին քանակը 45%-ից մինչև 75%»

Իմ հատուկ նպատակի համար որպես կատարողական ցուցանիշ ես ընտրել եմ «մեքենաների քանակը» (բայց ես կարող էի նաև ընտրել «Ա կետից մինչև Երևանի կենտրոն հասնելու համար անհրաժեշտ ժամանակը»):

Իմ գործառնական նպատակի համար որպես կատարողական ցուցանիշ ես ընտրել եմ «գրադվածությունը ավտոբուսներում»: Այդ ընտրությունը պետք է արտացոլի իմ վերհանված խնդրի պատճառների հարաբերական կարևորությունը:

5. ԻՆչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթեթը

Երբ սահմանել եք նպատակները, կիրառելով Ս.Մ.Ա.Ր.Թ. մոտեցումը, Դուք պետք է պատասխանեք Բաժին 3 ԿԱԳ Ամփոփաթեթին: Այդ բաժինը թվարկում է հնարավոր

կատարողական ցուցանիշները, որոնք կօգնեն Ձեզ գտնել Ձեր նպատակներին
ամենահամապատասխան ցուցանիշները:

ԲԱԺԻՆ 4. Կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքների մշակում

1. Ինչու է դա կարևոր

Ձեր նպատակները սահմանելուց հետո Դուք պետք է բացահայտեք և ուսումնասիրեք, թե ինչ գործիքներով և մեխանիզմներով կարող եք հասնել նպատակների: Գործիքները կարող են միավորվել, ձևավորելով քաղաքականության տարբերակ, որը կարող է կիրառվել հայտնաբերված խնդրի լուծման հարցում:

Մի շարք գործիքների կիրառումը ապահովում է ավելի թափանցիկ ԿԱԳ վարժություն: Դա նաև ավելի ամբողջական է հիմնավորում ընտրված գործողության ուղղությունը, ցույց տալով քաղաքականություն մշակողներին և շահառուներին, որ այլընտրանքային հավանական լուծումները լրջորեն քննարկվել են, բայց մի շարք պատճառներով չեն օգտագործվել:

2. Ի՞նչը կարող է հանդես գալ որպես հավանական գործիք

Հնարավոր գործիքներ գտնելն ու որոշելը խնդիրների լուծման և նպատակներին հասնելու մեկ այլ ճանապարհ է: Չնայած, որ խնդիրը արդեն բացահայտված է, դա դեռևս չի նշանակում, որ պետք է ներդրվի նոր կարգավորում: Հաճախ, դա որոշակի այլընտրանք է, որը արդեն ներառում է լուծում, օրինակ՝ տեղեկատվության փոխանակում և կրթության քարոզում: Հնարավոր տարբերակների ցանկը ներկայացված է Վանդակ 9-ում:

Վանդակ 9. Պետական գործիքների հնարավոր տեսակներ

Ոչ մի մի լուծում ի սկզբանե ճիշտ չէ: Բիզնեսի և անհատների կողմից կիրառվող գործիքներն, կախված ստեղծված իրավիճակից, կարող են փոփոխական լինել՝ հակասականից մինչև առավել ընդունելի տարբերակները:

Դրանք ներառում են.

- **ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՀՍԿՈՂԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ**. Առաջին հայացքից կարող է թվալ, որ այս կարգավորման գործիքը ամենահեշտ և ամենախոստումնալից լուծման տարբերակն է (քանի որ պարզ է, ստանդարտացված և կանխատեսելի է), սակայն այս կարգի կարգավորումները կարող են հանգեցնել զգալի վարչակատարողական ծախսերի, դժվարությունների, չկանոնակարգված և չհիմնավորված վարքագծի (բարոյական վտանգի):

Օրինակներ՝ ֆիքսված ելքային արդյունքումների մակարդակը, դիզայնի կամ տեխնոլոգիական նորմերը, արգելքները:

- **ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԿՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ**. Այս կարգի գործիքները սահմանում են ստանդարտ նորմեր, որոնց համաձայն թիրախային խմբերը պարտավոր են կատարել իրենց աշխատանքը: Ընդ որում, այն օրենքի կատարումը ապահովող որևէ մեխանիզմ չի առաջարկում, այլ սահմանում է չափանիշներ, որոնց հետևելով հնարավոր է դառնում այդ կատարումը: Նորմերը պետք է լինեն ճշգրիտ, որպեսզի թույլ տրվի տարբեր տնտեսվարող սուբյեկտների և կառավարող մարմինների միջև, նույնիսկ տարածաշրջանում կամ ազգային մակարդակով դրանց ճիշտ և արդյունավետ կիրառումը, պայմանով, որ սա անդառնալիորեն չի ազդելու ընդհանուր արդյունքի վրա:

Օրինակներ՝ միջուկային ռեակտորների վերահսկման գործընթացը, շենքերում ներքին հակահրդեհային համակարգերը (հասարակական շենքերի համար), աշխատավայրում անվտանգության նորմերը:

- **ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ.** Այս մոտեցումները հենվում են (ոլորտային) կամավոր համաձայնագրերի և նորմերի վրա, որոնց հիման վրա տնտեսվարող սուբյեկտները և/կամ սոցիալական սուբյեկտները ինքնուրույն կարագավորում և կազմակերպում են իրենց գործունեությունը: Իրավական կարգավորում որպես այդպիսին չի պահանջվում, բայց պահանջում են վստահություն և փոխհամաձայնություն օպերատորների և իրենց հաճախորդների միջև: Ինքնակարգավորման դեպքում, կատարման և կիրառման խնդիրները իրականացվում են ոչ կառավարական մարմինների կողմից: Համակարգավորող ռեժիմները, ի տարբերություն, ենթադրում են ամուր համագործակցություն տնտեսության հիմնական դերակատարողների (որոնք սահմանում են գործունեության սեփական կարգն ու կանոնը) և կառավարության միջև: Վերջինս հստակ սատարում է այդ կանոնները և պատասխանատու է դրանց կիրարկման համար: Ի լրումն, ինքնակարգավորումը պետք է լինի բաց և թափանցիկ գործընթաց, քանի որ այն կարող է առաջացնել հանցավոր համագործակցության տարրեր/ռիսկեր մրցակիցների շրջանակներում (Քարտեյ): Այս դեպքում, ինքնակարգավորման և համակարգավորման չնախատեսված հետևանքը կարող է լինել մրցակցության կրճատումը:

Օրինակներ՝ մասնագիտական վարքագծի կամ որակավորման պահանջների կանոններ (օրինակ, նոտարների, բժիշկների, հաշվապահների համար.), գովազդման նորմեր, որակի ստուգման սխեմաներ:

- **ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.** Այս տարբերակը միշտ քննարկելի է, եթե գործ ունենք արդեն ընդունված որևէ իրավական կարգավորման հետ; Այն կարելի է ստուգել տվյալ կարգավորմամբ պահանջվող դրույթների կատարման որակը ստուգելով:

Օրինակներ՝ տեսչական գործունեության գործառույթների վերանայում, փաստացի կատարման գնահատում:

- **ԱՊԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՊԱՐԶԵՑՈՒՄ.** Հաճախ մոռացվում է, որ քաղաքականության կարգավորման նույնիսկ մեկ տարբերակը ի գորու է կանոնակարգել ազգային օրենսդրական դաշտում առկա իրավական ակտերի հոսքը՝ կառավարման տարբեր մակարդակներում:

Օրինակներ՝ կարգավորիչ գիյոտին, կողիֆիկացում:

- **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** (պետական մարմինների հովանավորությամբ). Կրթական գործիքներն ի գորու են արդյունավետ կերպով զարգացնել կատարման և կառավարման գործնական հմտությունները՝ առավել ևս, եթե թիրախային խմբերի անձնական շահերը ճիշտ օգտագործվում են: Կրթելով և հնարավոր հետևանքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով՝ Կառավարությունը կարող է «թեթև հրել» և սատարել թիրախային խմբերին: Անկասկած, մարդկանց փոփոխությունների մասին մի փոքր իրազեկելը նույնիսկ կարող է մեծ ազդեցություն ունենալ կարգավորման վերջնական արդյունքի վրա:

Օրինակներ՝ «խմելու և վարելու» կրթական քարոզարշավը, մարդու օրգանների նվիրաբերության մասին իրազեկման քարոզարշավը, «էկո-պիտակավորում»:

- **ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ.** Գույքային իրավունքները, նոր շուկաների ստեղծումը, գործող շուկաների ընդլայնումը, պարտավորությունների կատարումը և այլն՝ այս բոլոր գործիքները կարող են ազդել շուկայում նշանակալի դերակատարում ունեցող սուբյեկտների վարքագծի վրա՝ ապահովելով (բացասական/դրական) նրանց համար ֆինանսական խթաններ կամ, որոշ դեպքերում, խաղի հիմնական կանոնների

երաշխավորում: Հարկերը, գանձումները և վճարները քաղաքականության հարմար այն գործիքներն են, որոնք օգտագործվում են մասնավոր շահը ի օգուտ պետական նպատակների վերածելու համար: Նրանք ապահովում են ճկունություն և ծախսերի արդյունավետություն և երաշխավորում, որ սպառողները վճարեն իրենց արտադրած և սպառած արտադրանքի սոցիալական գինը:

Օրինակներ՝ առևտրային սխեմաները CO2 արտանետումների թույլտվությունների համար, բնապահպանական հարկեր, տուրքեր ծխախոտի արտադրանքի համար:

3. ինչպես բացահայտել գործիքները

Ձեր կողմից առաջարկված գործիքները պետք է **ակնհայտորեն կապված լինեն ինչպես պատճառների, այնպես էլ նպատակների հետ**: Յուրաքանչյուր գործիք ընտրելիս անհրաժեշտ է ճշտել և որոշել դրա հավակնությունների ազդեցությունը հնարավոր սահմանափակումների համատեքստում, ինչպիսիք են, օրինակ՝ կատարողական ծախսերը կամ որքանով են դրանք համապատասխան: Անհրաժեշտության դեպքում գործիքները կարող են համատեղվել մեկ փաթեթում, օրինակ՝ համաձայնեցումը նաև միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի հետ:

Գործիքների վերհանման հիմնական միջոց է՝ **գործիքների համապատասխանության սկզբունքը**: Կառավարության ցանկացած գործողություն չպետք է գերազանցի սահմանված նպատակային նշանդրերը: Ուստի, Կառավարության գործողությունները պետք է լինեն հնարավորին չափ պարզ և հստակ, որպեսզի ապահովվի պետական կամ անհատական միջամտության համար հնարավորինս բաց հարթակ (սուբսիդիարության սկզբունք):

Վանդակ 10. Համապատասխանության սկզբունքի կարևորությունը

Ստորև բերված են հատուկ հարցեր, որոնց պատասխանելով այո/կամ ոչ կարող է ստուգվել ԿԱԳ-ով առաջարկված գործիքների համապատասխանությունը: Այդ պատասխանները պետք է մեկնաբանվեն և, որտեղ հնարավոր է, լրացվեն որակական և քանակական փաստերով: Գործիքների համապատասխանության ստուգումը կօգնի Ձեզ կազմել հնարավոր գործիքների կարճ ցանկ, որոնց միջոցով կկատարվեն ավելի խորը վերլուծություններ:

Գործիքների բովանդակության տեսանկյունից՝

- Արդյո՞ք գործիքը բխում է նպատակի հասնելու անհրաժեշտությունից,
- Արդյոք գործողությունների շրջանակը այնքան սահմանափակ է, որ, Կառավարությունից բացի այլ սուբյեկտներ նույնպես կարող են ինքնուրույն և հեշտությամբ հասնել նպատակին: Որտե՞ղ է այդ սահմանը (սահմանային թեստ),
- Եթե նախաձեռնությունն առաջացնում է բացասական ազդեցություններ, արդյո՞ք այդ ծախսերը նվազեցվում են կամ համապատասխանեցվում ձեռք բերված նպատակներին,
- Սահմանված նպատակներին հասնելու ընթացքում արդյո՞ք Կառավարության գործողությունները թույլ կտան ներպետական որոշումների այնքան լայն շրջանակ, որքանով դա հնարավոր է,

- Արդյո՞ք գործիքը համաձայնեցված է սահմանված միջազգային, ԵՄ և ներքին իրավական դրույթների հետ:

Գործիքի տեսակի հետ կապված՝

- Արդյո՞ք ընտրված գործիքը պարզ է և նպատակահարմար նպատակներին հասնելու և արդյունավետ կիրառման համար,
- Առկա՞ է արդյոք գործիքի ընտրության պատշաճ հիմնավորում,

ՀՈՒՇՈՒՄ. Տարբերակների մշակման գործընթացը համակարգային դարձնելու համար լավագույն եղանակը՝ «խնդիրի ծառի» մոտեցման օգտագործումն է, որը ներկայացված է Բաժին 1-ում: Քանի որ խնդիրը կարող է ունենալ բազմաթիվ շարժիչ գործոններ և պատճառներ, արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ կլինեն մի շարք լուծումներ:

Վանդակ 11. Խցանման օրինակ. Տարբերակների մշակումը

Այս փուլում իմ առաջադրանքն է՝ հիմնական խնդրի լուծումը (Երևան քաղաքի կենտրոնում խցանումների վերացումը) և հնարավոր տարբերակների մշակումը, որոնք կօգնեն հասնել իմ նպատակներին:

Հիշենք իմ գործառնական նպատակը, այն է՝ «մինչև 2016 թվականի դեկտեմբերը բարձրացնել քաղաքի ավտոբուսների միջին զբաղվածությունը 45%-ից մինչև 75%»: Տարբերակները, որոնց միջոցով կարող եմ դրան հասնել հետևյալներն են՝

- յուրաքանչյուր ժամվա ընթացքում քաղաքային ավտոբուսի թվի ավելացում՝ այսպիսով ունենալով ավելի հաճախակի ավտոբուսներ տվյալ երթուղիով,
- նվազեցնել ավտոբուսի վճարը բոլորի համար,
- նվազեցնել ավտոբուսի վճարը միայն հանրային հատվածի աշխատողների համար,
- կառուցել արտոնյալ գծեր քաղաքային ավտոբուսի համար,
- սահմանել հարկեր անձնական մեքենաներով քաղաքի կենտրոն մուտք գործողների համար,
- այլ:

Հաշվի առեք, որ իմ նպատակին հասնելու համար ես կարող եմ փոխարինել մեծ ավտոբուսները փոքրերով: Միջին նստատեղերի քանակը կաճի, բայց արդյո՞ք դա կլուծի իմ խնդիրը: Իմ ընտրած տարբերակները պետք է հաշվի առնեն ինչպես խնդիրը, այնպես էլ նպատակները:

Յուրաքանչյուր տարբերակ ունի տարբեր ազդեցություններ պետական բյուջեի, տրանսպորտից օգտվողների, տնտեսվարող սուբյեկտների, շրջակա միջավայրի և այլնի վրա: Հաջորդ բաժինը հնարավորություն է տալիս բացահայտելու այդ ազդեցությունները:

4. Ինչպես լրացնել ԿԱԳ Ամփոփաթերթը

Նախորդ քայլում Ձեր կողմից սահմանված յուրաքանչյուր նպատակի համար Դուք պետք է պատրաստեք առնվազն մեկ, ցանկալի է երկու կամ անգամ երեք գործիք(ներ), որն (որոնք) ունի (ունեն) այդ նպատակին հասնելու ներուժ: Դուք պետք է հստակ նկարագրեք այդ գործիքները ԿԱԳ Ամփոփաթերթի Բաժին 4-ում՝ մասնավորապես ընդգծելով գործիքի կիրառման և նպատակին հասնելու **պատճառահետևանքային կապերը**:

5-րդ բաժին - Ազդեցության բացահայտում և գնահատում

1. Ինչու՞ է դա կարևոր

Բաժին 4-ում «առաջարկված գործիքները» համադրության մեջ ճիշտ գնահատելու նպատակով անհրաժեշտ է դրանք գնահատել նույն գնահատման մեթոդով: Սա նշանակում է ներկայացնել յուրաքանչյուր առաջարկված տարբերակից հետևող բոլոր դրական և բացասական ազդեցությունները: Սրա նպատակն է հնարավորության սահմաններում կանխատեսել առաջարկված տարբերակի բոլոր հնարավոր ծախսերը և օգուտները և այս ճանապարհով բացահայտել տարբերակների էֆեկտիվությունը և արդյունավետությունը: Տարբերակների ազդեցությունները բացահայտելուն պես դրանք պարտադիր համեմատվում են, ինչը և հնարավորություն է տալիս որոշում կայացնողին ընտրել ամենաարդունավետ և էֆեկտիվ տարբերակը:

Հուշում. Էֆեկտիվ թե արդյունավետ.

Էֆֆեկտիվ տարբերակը ապահովում է քաղաքականության նպատակը (անկախ առաջացած ծախսերից), իսկ արդյունավետ տարբերակը հասնում է նույն նպատակին հնարավոր մինիմալ ծախսերով:

2. Ազդեցության տեսակի ճշտումը

Քաղաքականության միջամտությունը կարող է ունենալ ազդեցություն տնտեսության, հասարակության և շրջակա միջավայրի վրա: Այդ ազդեցությունների բացահայտումը և գնահատումը այնքան էլ բարդ չէ, որքան դա թվում է: Գործեր քայլ առ քայլ, ուսումնասիրեք ամեն մի տարբերակի հնարավոր արդյունքները, և բացահայտեք, թե արդյո՞ք այդ արդյունքները բացասական են (ծախսեր) կամ դրական (օգուտներ): Նախ սկսեք նկարագրել դրանց որակապես և հետո ամենակարևոր ազդեցությունները ներկայացրեք քանակապես:

3. Ազդեցության ենթարկված խմբերի ճշտումը

Որոշ տարբերակներ կարող են ազդել միայն մի խմբի վրա, մինչդեռ այլ տարբերակներ կարող են ազդել մի քանի կամ բոլոր խմբերի վրա: Այդ իսկ պատճառով, նախ և առաջ պետք է գտնել և ցուցակագրել գործող անձանց (խմբեր, բաժիններ, այլն), որոնք կարգավորման/քաղաքականության կողմից կարող են ենթարկվել ազդեցության:

Կան տարբեր խմբեր, որոնք կարող են կարգավորման կամ քաղաքականության կողմից ենթարկվել ազդեցության: Դրանք են ձեռնարկությունները, քաղաքացիները, հանրային կառույցները և ոչ պետական կազմակերպությունները (ՀԿ-ները):

Հուշում. Հետագա տեղեկատվության համար անդրադարձիր Ձեռնարկի 2-րդ գլխին՝ «Տվյալների հավաքագրում և հանրային խորհրդակցություններ» (մասնավորապես «շահառուների մատրից»):

Վանդակ 12- Տրանսպորտային խցանումների օրինակում՝ ազդեցության ենթարկված խմբերի ճշտումը

Մեզ հայտնի տրանսպորտային խցանումների օրինակի մեջ ազդեցության ենթարկված կամ ներգրավված խմբերը բաժանվում էին երեք հիմնական խմբերի՝ անհատ քաղաքացիներ, մասնավոր տնտեսավարող սուբյեկտներ և հանրային կառույցներ:

- Ամենաշատ ազդեցության ենթարկված քաղաքացիները՝ դրանք աշխատանքային տարիքում գտնվողներն են, որոնք պետք է տեղաշարժվեն Երևան քաղաքի կենտրոնում կամ շարժվեն ծայրամասերից դեպի կենտրոն՝ իրենց աշխատանքի վայր հասնելու համար: Այլ ազդեցության ենթարկված քաղաքացիներ են՝ դպրոցի գործունեության մեջ ներգրավվածները (աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ, որոնք ուղեկցում են իրենց երեխաներին դպրոց): Տարեց մարդիկ, քնականաբար, ավելի քիչ են ենթարկվում ազդեցության խնդրի կողմից:

- Ազդեցության ենթարկված մասնավոր ձեռնարկությունները՝ դրանք Երևանի կենտրոնում գտնվող ձեռնարկություններն են, ինչպես նաև դրանց սպասարկող բիզնեսները (օրինակ՝ մթերային խանութներ):
- Խցանումների պատճառով ազդեցության ենթարկված հանրային կառույցներն են՝ հանրային կառավարման մարմիններ, հիվանդանոցներ, ոստիկանություն և աղբահանության ծառայություն մատուցող կառույցներ:

Նպատակահարմար է դիտվում ազդեցության ենթարկվող հնարավոր շահառուներին մշտապես ներկայացնել քանակապես: Մեր օրինակում, կարող ենք գնահատել, որ մոտ 20000 տրանսպորտային միջոցների սեփականատերեր և 5000 Երևանի կենտրոնում գտնվող ձեռնարկություններ խցանումների պատճառով կենթարկվեն ազդեցության:

4. Ինչպե՞ս են խմբերը ենթարկվում ազդեցության

Ազդեցությունները կարող են լինել դրական և բացասական (քանի որ դրանք ներառում են թե ծախսեր և թե օգուտներ): Բիզնեսների և նման այլ խմբերի համար դրանք կատարողական ծախսերն են, հանրային կառավարման մարմինների համար՝ բյուջետային ծախսերը, ինչպես նաև տնտեսական, հասարակական, շրջակա միջավայրին վերաբերվող մեծ ծախսերը և օգուտները: Ծախսերի և օգուտների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է լինել քանակական և որակական:

Քանակական տեղեկատվությունը արտահայտված է թվերով: Քանի որ շատ ցանկալի է կատարել ազդեցությունների համեմատում, սա նաև ամենացանկալի այլընտրանքն է: Այդ իսկ պատճառով ազդեցությունները (այսինքն՝ ծախսերը և ամեն մի տարբերակից սպասվող օգուտները) պետք է ներկայացվեն քանակապես և գործնականում արտահայտվեն դրամային տեսքով (այսինքն՝ նրանց տրվեն դրամային արժեք):

Այնուամենայնիվ, շատ դեպքերում կարող է դժվար լինել քանակապես գնահատել տարբեր տարբերակների ազդեցությունները հիմնականում սահմանափակ, ոչ վստահելի կամ չհամեմատվող տվյալների պատճառով: Այսպիսի պայմաններում որակական տեղեկատվությունը պետք է հանդիսանա գնահատման գործընթացի մի մասը: Նույնիսկ երբ ծախսերը հնարավոր չէ ներկայացնել քանակապես, հնարավոր է տարբեր տարբերակները քննարկել որակական տեսանկյունից և տալ որոշակի եզրակացություններ դրանց կարևորության վերաբերյալ:

Հուշում. Քանակական վերլուծություններ չեն նշանակում սուբյեկտիվ վերլուծություններ: Եղիր հնարավորինս թափանցիկ ենթադրություններ և ազդեցությունների որակավորման չափանիշներ առաջադրելիս: Դու կարող ես բարձրացնել դրանց գնահատման նպատակահարմարությունը նաև դրանց վերաբերյալ խորհրդակցություններ կազմակերպելով (օրինակ՝ կառավարության առանցքային/ֆոկուս/ խմբերի միջոցով (ներքին կամ խառը ձևաչափերով):

Խնդրի սահմանման կամ հնարավոր ազդեցությունների վրա աշխատելիս, կարևոր է տարբեր եղանակներով հաշվի առնել տնտեսության տարբեր հատվածները և հասարակության տարբեր խմբերը: Ներքևում գտնվող աղյուսակը օգնում է դիտարկել այս փուլում հաշվի առնվող մասնակիցների տարբեր տիպային տեսակները:


Աղյուսակ 3 - Տարբերակում սոցիալական և տնտեսության գործող անձանց միջև

Սոցիալական տարբերակում				Տնտեսական տարբերակում
Տարիքային խմբեր	Ըստ եկամտի բաշխվածության խմբեր	Խմբեր, որոնք ենթարկվում են խտրականության կամ այլ սոցիալական անհարմարությունների	Աշխարհագրական խմբեր	
<ul style="list-style-type: none"> ▪ Երեխաներ և երիտասարդներ ▪ Տարեցներ ▪ Հատուկ տարիքային խումբ 	<ul style="list-style-type: none"> ▪ Ցածր եկամուտ ունեցող անձինք ▪ Տնտեսապես ոչ ակտիվ անձիք ▪ Գործազուրկ ներ ▪ Անաշխատուն ակներ 	<ul style="list-style-type: none"> ▪ Ֆիզիկական կամ մտավոր սահմանափակում ներով / բարդություններով անձինք ▪ Փախստականներ ի խմբեր ▪ Ապաստան հայցող անձինք ▪ Ճանապարհորդող ներ ▪ Միակողմանի ծնողազուրկ ընտանիքներ ▪ Սեռական փոքրամասնություններ ▪ Սևամորթ և էթնիկ փոքրամասնություններ (նշել) ▪ Կրոնական խմբեր (նշել) 	<ul style="list-style-type: none"> ▪ Աղքատ տնտեսական և/կամ առողջական ցուցանիշներով հայտնի տարածքներում բնակվող անձիք ▪ Մեկուսացված/ գեր-բնակեցված տարածքներում բնակվող անձինք ▪ Ծառայություններ ին և հարմարություններ ին հասանելիություն չունեցող անձիք ▪ Երրորդ երկրի քաղաքացիներ 	<ul style="list-style-type: none"> ▪ Հատուկ արդյունաբերական ոլորտներ ▪ Տնտեսվարող սուբյեկտների մեծությունը (օր.՝ մուլտի-ազգային կորպորացիաներ, ՓՄՁ-ներ, անհատ ձեռնարկատերեր) ▪ Արժեքային շղթայում դիրքը (օր.՝ արտադրողներ, տեղափոխողներ, վերամշակողներ, մանրածախ առևտրականներ) ▪ Սպառողներ ▪ Ներքին և արտաքին օպերատորներ ▪ Ներմուծման կամ արտահանման մեջ ներգրավված անձինք

5. Ինչպե՞ս գնահատել ծախսերը

ԿԱԳ-ն ապագայում ի հայտ եկող կանխատեսված ծախսերի վերաբերյալ գնահատման վարժություն է: Մոդելավորման և հավանական շատ բարդ իրականության ըմբռնման համար, որպես կանոն, անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ուղղակի կատարողական ծախսերը: Սա վերաբերում է ձեռնարկություններին, հանրային ոլորտին կամ անմիջապես քաղաքացիների կողմից կատարված գումարային ծախսերին և կապված է ԿԱԳ տարբերակի համապատասխանեցման հետ:

Գծապատկեր 1 - Գործիքով պայմանավորված ծախսերի սխեմա



Ընդհանուր առմամբ, համապատասխան ծախսերի տիպային տեսակները, որոնք պետք է հաշվի առնել, բերված են ստորև՝

- **Գործառնական ծախսեր.** աշխատուժի ծախսերն (օրինակ՝ աշխատավարձեր) են և հանրային կառավարման մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կամ քաղաքացիների կողմից ծախսված ժամանակն է, ինչպես նաև գործիքով պահանջվող խնդրի լուծմանն ուղղված կամայական վճարները:

Գործառնական ծախսերի մեջ ներառված են նաև վարչարարությունը, այսինքն՝ ծախսեր, որոնք կապված են իրավական ակտերով պահանջվող «Տեղեկատվության պարտավորություններ»-ի (ՏՊ-ներ) կատարման հետ: ՏՊ-երն այն պարտավորություններն են, որոնք առաջանում են կարգավորման ընթացքում հանրային ոլորտին կամ երրորդ անձանց տեղեկատվության և տվյալների տրամադրման ժամանակ: ՏՊ-ն չի նշանակում, որ տեղեկատվությունն անհրաժեշտաբար պետք է փոխանցվի հանրային կառույցներին կամ մասնավոր անձանց, սակայն այն կարող է ներառել ստուգումների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության ապահովման պարտավորություն կամ տեղեկատվության տրամադրում ըստ պահանջի: Կարգավորումը կարող է պարունակել բազմաթիվ տեղեկատվական պարտավորություններ:

Գործառնական ծախս է նաև հարկադիր մարմնի (օրինակ՝ պետական տեսուչներ, ոստիկանություն և այլն) գործիքի կիրառման արդյունքում առաջացող պարտադիր ծախսերը:

- **ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ.** գործիքի պահանջների կատարման համար ձեռք բերված ապրանքների կապիտալ արժեքը:

Օրինակ՝ կապիտալ ծախսերի տակ կարող են ներառվել գործիքի կիրառման և իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների ծախսերը՝ կապված հումքի, սարքավորումների, ծրագրային ապահովման և կապիտալ հանդիսացող այլ ապրանքերի հետ:

ՊԱՀՄԱՆՊԱՆ ԾԱԽՍԵՐԸ. ևս կապիտալ ծախսերի մի մաս են, որոնք վերաբերվում են սարքավորումների պահմանման, վերանայման և թարմացման ծախսերին: Դրանք ենթակա են հաշվարկման՝ այդ կապիտալ ապրանքների մեկ տարուց ավել օգտագործման դեպքում:

- **ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ.** Եկամտի հնարավոր կորուստներից առաջացող ծախսեր, որ տնտեսվարող սուբյեկտները կարող են կրել սպասվող կարգավորման որոշումների կամ կառավարչական գործընթացների ուշացման պատճառով: Դրանք կարող են լինել տեղին հատկապես լիցենզավորման կամ թույլատվությունների վարչակարգի փոփոխությունների ժամանակ, երբ ձեռնարկատերը արդեն լրացրել է դիմումը և պետք է սպասի կառավարության որոշմանը իր գործունեությունը սկսելու համար:

Հուշում. Հիշիր, որ **ԿԱԳ-ի խնդիրը գործիքի կողմից առաջարկվող ընթացիկ իրավիճակի փոփոխության բացահայտումն ու գնահատումն է (առանց գործողության տարբերակ):**
Համապատասխանաբար, կենտրոնացիր գործիքով պայմանավորված նոր/հավելյալ ուղղակի կատարողական ծախսերի վրա:


Հիշիր, որ գործիքը առաջացնում է նաև անուղղակի ծախսեր: Սա սովորաբար ազդում է երրորդ կողմերի վրա և հաճախ առաջանում է, որպես վարքագծային փոփոխության արդյունք՝ պայմանավորված կարգավորման առաջին փուլի ազդեցությամբ: Դինամիկ ծախսերը այս բաժնում կարող են դիտարկվել այն ծախսերը, որոնք առաջացել են ժամանակի ընթացքում շուկայական պայմանների բացասական փոփոխության հետևանքով: Դրանք սովորաբար կապված են մեծ անորոշությունների հետ և կարող են առաջ քաշել ավելի մեծ վերլուծական մարտահրավերներ: Պարզության նպատակով, սույն ԿԱԳ ձեռնարկը առաջարկում է կենտրոնանալ ուղղակի կատարողական ծախսերի գնահատման վրա:

Նման ծախսերը գնահատելու համար, հիմք ընդունիր **ուղղակի կատարողական ծախսերի գնահատման մեթոդի** հետևյալ ձևը՝

- բացահայտիր գործիքի պահանջները, որոնք առաջացնում են ծախս;
- հաշվարկիր ամեն մի պահանջի միավոր ծախսը (վճարման, լիցենզիայի, թույլատվության, կապիտալի, աշխատավարձի, և այլն);

- հաշվարկի գործիքի պահանջներով պայմանավորված ընդհանուր կատարողական ծախսը ամեն մի անձի համար;
- գնահատիչի պահանջից ազդեցության ենթարկված անձանց ընդհանուր թիվը;
- գնահատիչի վճարումների հաճախականությունը (1 = տարեկան մեկ անգամ, 2 = տարեկան երկու անգամ, 0.5 = երկու տարին մեկ անգամ), և
- ամեն մի պահանջի ընդհանուր ծախսը հաշվարկելու համար բազմապատկիչ դրանք և բոլոր գործիքների պահանջներով պայմանավորված ծախսերը գումարի՝ վերջնական ընդհանուր արդյունքը ստանալու համար:

Գծապատկեր 2 - Ուղղակի կատարողական ծախսերի գնահատման նկարագրություն



Հուշում. Ի նկատի ունեցիր, որ վերևում ներկայացված է ուղղակի կատարողական ծախսերի գնահատումը մեկ տարվա համար: Շատ հաճախ, կատարողական ծախսերը տարածվում են մի քանի տարվա կտրվածքով: Եթե այդ դեպքն է, հիշիր, որ օգտագործես դիսկոնտավորման բանաձևը (տես 5.9 կետը ներքևում)

Վանդակ 13 - Օրենսդրության Կարգավորման Ազգային Կենտրոնի պարամետրերը և հաշվարկները

ՕԿԱԿ-ը մշակել է կատարողական ծախսերի գնահատման մեթոդ, որը ենթադրում է մի շարք ֆիքսված պարամետրեր: Որոնք ներառում են՝

- Դիմումի լրացում 0.5 ժամ
- Նոտարական հաստատում 2000 դրամ
- Ապոստիլով հաստատում 5000 դրամ
- Տրանսպորտային ծախսեր 1000 դրամ ամեն մի քայլի համար
- Պատճենահանման / փոստային առաքման ծախսեր 0.5 ժամ
- Մասնագիտական աշխատավարձեր 2000 դրամ/ ժամը
- Աշխատակցի աշխատավարձ կամ քաղաքացու ծախսած ժամանակ 1000 դրամ/ ժամ
- Եկամտի կորուստ ըստ ոլորտների
- Փոխիր աշխատանքային օրը օրացուցային օրվա

ՕԿԱԿ հաշվողական համակարգեր

Ավելին, ՕԿԱԿ-ը մշակել է երկու ինտերակտիվ աղյուսակներ համապատասխանաբար մասնավոր և հանրային հատվածի համար առաջացած ուղղակի կատարողական ծախսերը անմիջապես հաշվարկելու համար: Դիմեք ՕԿԱԿ-ին ուղղորդման համար:

Հուշում. Կատարողական ծախսերի գնահատման, նախագծման և իրականացման ուղեցույցը կարող եք գտնել **ՏՀՁԿ համապատասխան ձեռնարկում (2014) հետևյալ հասցեով՝**

http://www.normenkontrollrat.bund.de/Webs/NKR/Content/EN/Publikationen/oecd_regulatory_compliance_cost_guidance.pdf? blob=publicationFile&v=3 (անգլերենով)

6. ՓՄՁ-երի վրա ազդեցությունը

Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ), իրենց փոքր չափերի և սահմանափակ ռեսուրսների պատճառով, կարող են կարգավորման ծախսերի կողմից ավելի մեծ ազդեցության ենթարկվել, քան իրենց ավելի խոշոր մրցակիցները: Միևնույն ժամանակ կարգավորումից առաջացած օգուտները հակված են հավասարաչափ բաշխվելուն՝ տարբեր չափերի ձեռնարկությունների համար: ՓՄՁ-երը կարող են ունենալ սահմանափակ հնարավորություններ տնտեսական մասշտաբներից օգտվելու համար: Ընդհանրապես, ՓՄՁ-երի համար կապիտալի հասանելիությունը ավելի բարդ է և որպես արդյունք, կապիտալի ծախսը ավելի մեծ է լինում նրանց համար ավելի մեծ ձեռնարկությունների համեմատությամբ:

ՓՄՁ-երի դասակարգումը ըստ տեսակների տարբերակելը ընդունված փորձ է՝ մասնավորապես հիմք ընդունելով աշխատողների քանակը.

- Շատ փոքր ձեռնարկությունները ունենում են մինչև 10 աշխատակից
- Փոքր ձեռնարկությունները ունենում են 11-ից 50 աշխատակից
- Միջին ձեռնարկությունները ունենում են մինչև 250 աշխատակից

Հաշվի առնելով վերոնշյալ պատճառները և Հայաստանում մեծ քանակությամբ ՓՄՁ-ների առկայությունը՝ հատկապես կարևոր է ազդեցությունների բացահայտման և գնահատման ժամանակ հաշվի առնել հենց այս տեսակի ձեռնարկությունները:

Կան ՓՄՁ-երի հարցադրման 5 քայլեր.

- **ԱՐԴՅՈՒՔ ՓՄՁ-ԵՐԸ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ: ՈՐ ՏԵՍԱԿԻ ՓՄՁ-ԵՐՆ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ: ՔԱՆԻՄՆ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ:**

Համապատասխանաբար, փաստերը պետք է հավաքվեն, օրինակ, ազդեցության ենթարկված տարբեր կատեգորիայի ձեռնարկությունների զբաղվածության համամասնությանը, ոլորտներում տարբեր տեսակի ՓՄՁ-երի կշիռներին համահունչ (շատ փոքր, փոքր և միջին), և պետք է այլ ոլորտներին և ենթապայմանագրերի վրա հնարավոր ազդեցություններին հղում տան:

- **ՈՐՈՂՆՔ ԵՆ ՓՄՁ-ԵՐԻ ԾԱԽՍԵՐՆ ՈՒ ՕԳՈՒՏՆԵՐԸ:**

Այս քայլը պետք է հետևի վերևում 5.5 կետում ներկայացված Ուղղակի Կատարողական Ծախսերի Գնահատման տրամաբանությանը և մոտեցմանը՝ մասնավորապես կենտրոնանալով ՓՄՁ-երի վրա: ՓՄՁ-երի օգուտը այս դեպքում կլինի գոյություն ունեցող ծախսերի ցանկացած կրճատումը:

- **ԻՆՉՊԵՍ ԵՆ ՓՄՁ-ԵՐԻ ԱՅՍ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՄԵՄԱՏՎՈՒՄ ՄԵԾ ԶԵՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԵՏ:**

Այս համեմատության ժամանակ ճիշտ կլինի նաև գնահատել, թե արդյոք տարբեր տեսակի ՓՄՁ-երի ծախսերը և օգուտները տարբերվում են, օրինակ արդյո՞ք շատ փոքր ձեռնարկությունները և փոքր ձեռնարկությունները ենթարկվում են տարբեր ազդեցությունների: Այս նպատակով համեմատիր բացահայտված բոլոր աշխատողների ընդհանուր ծախսերը՝ ամեն մի աշխատողի միջին ծախսը հաշվարկելու համար: Այլապես, համեմատիր բացահայտված ընդհանուր վերադիր ծախսերը կամ ձեռնարկության շրջանառությունը:

- **ԿԱՆ ԱՐԴՅՈՒՔ ԳՈՐԾԻՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՂՆՔ ԱԶԴՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՓՄՁ-ԵՐԻ ՎՐԱ:**

Այսպիսի երկրորդական ծախսերը կարող են կապված լինել մրցակցության (տես 5.7 կետը վերևում) կամ ՓՄՁ-երի աշխատակիցների աշխատանքային պայմանների փոփոխության կամ ՓՄՁ-երի նորարարելու / ներմուծելու կարողունակության հետ, և այլն:

- **ԿԱՆ ՓՄՁ-ԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՄ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՆԵՐՍ ՈՉ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԳՈՐԾԻՔԻ ԿՈՂՄԻՑ:**

ՓՄՁ-երի ոչ համամասնական ծանրաբեռնվածությունից խուսափելու համար, հաշվի առ, թե արդյոք հնարավոր է ներմուծել ՓՄՁ-երին հատուկ դրույթներ, օրինակ , երկար անցումային փուլերի թույլատվություն, հաշվետվողականության պահանջներից ազատելու տրամադրում (ժամանակավոր/ մշտական, մասնակի / ամբողջական), փոխհատուցման սխեմաների ներմուծում կամ տնտեսական այլ խթաններ, ինչպիսիք են, օրինակ, լրավճարները: Այսպիսի մեղմացնող պայմանների նպատակահարմարությունը և իրագործելիությունը հատուկ են որոշակի դեպքերի համար և կախված են խնդրից, հետապնդվող նպատակից, և բովանդակությունից (օրինակ՝ բյուջետային սահմանափակումներից):

ՓՄՁ-երի վերաբերյալ փաստերի հավաքագրման ամենաուղղակի ճանապարհներ են Ազգային վիճակագրական ծառայության տվյալներին անդրադարձը և թիրախային խորհրդակցությունների կազմակերպումը:

7. Ազդեցություն մրցակցության և պետական օժանդակության վրա

Քանի որ գործիքները կարող են ազդել մրցակցության վրա, համոզվիր արդյոք նրանք ներառում են բացահայտ ազատականացման դրույթներ կամ միջոցներ, որոնք կարող են բարձրացնել կամ իջեցնել արգելքները, որոնց ընկերությունը հադիպում է շուկա մուտք գործելիս կամ շուկայից հեռանալիս:

Ներքևում ներկայացված հարցերը դուրս են բերված ՏՀՁԿ-ի կողմից մշակված Մրցակցության ստուգման հարցաշարից: Նրանց պետք է պատասխանել ներառված ամեն մի տարբերակի համար:

Էկոնոմիկայի նախարարությունը կամ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը կարող են աջակցել այս հարցերին պատասխանելիս: Երբ հարցերից որևէ մեկին տրվել է դրական պատասխան, անհրաժեշտ է հիմնավորել մրցակցության սահմանափակման անհրաժեշտությունը և հարմարավետությունը: Տեղեկացրու, եթե սահմանափակումը չհիմնավորվող է:

Աղյուսակ 4 - Մրցակցային հարցադրումներ

	Հարցադրում	Հնարավորություն: Եթե տարբերակը ...	Տարբերակ 1	Տարբերակ 2	Տարբերակ 3
1	Արդյո՞ք տարբերակը սահմանափակում է տնտեսվարող սուբյեկտների քանակը կամ տեսակը շուկայում:	<ul style="list-style-type: none"> • Տնտեսվարող սուբյեկտին տալիս է բացառիկ իրավունքներ: • Հաստատում է լիցենզիա, թույլատվություն կամ լիազորություն տալու գործընթաց՝ որպես գործունեության իրականացման պահանջ: • Սահմանափակում է որևէ տեսակի տնտեսվարող սուբյեկտի՝ ապրանքի կամ ծառայության մատուցման հնարավորությունները: • Զգալիորեն բարձրացնում է 			

		<p>տնտեսվարող սուբյեկտի մուտքի կամ ելքի ծախսերը</p> <ul style="list-style-type: none"> • Ստեղծում է արգելքներ ապրանքների, ծառայությունների, կապիտալի կամ աշխատուժի տեղաշարժի համար: 			
2	Արդյո՞ք տարբերակը սահմանափակում է տնտեսվարող սուբյեկտների մրցակցային հնարավորությունները:	<ul style="list-style-type: none"> • Սահմանափակում է տնտեսվարող սուբյեկտների հնարավորությունները կամ ազատությունը սահմանելու իրենց արտադրանքի գինը: • Սահմանափակում է տնտեսվարող սուբյեկտների հնարավորությունները կամ ազատությունը գովազդելու իրենց արտադրանքները: • Պահանջում է տեխնիկական կամ որակական չափանիշներ, որոնք ապահովում են առավելություն որոշ տնտեսվարող սուբյեկտների համար մյուսների նկատմամբ կամ որ այդ չափանիշները բարձր են այն սահմանագծից, որ որոշ լավ տեղեկացված հաճախորդներ կցանկանան ընտրել: • Ստեղծում է տարբեր պայմաններ շուկայում գործող և նոր մուտք գործող սուբյեկտների համար: 			
3	Արդյո՞ք տարբերակը նվազեցնում է տնտեսվարող սուբյեկտների մրցակցելու ցանկությունը:	<ul style="list-style-type: none"> • Ստեղծում է ինքնակարգավորման կամ համատեղ կարգավորման ռեժիմներ: • Պահանջում կամ խրախուսում է սուբյեկտների արտադրանքի քանակի, գների, վաճառքի կամ ծախսերի մասին տեղեկատվության հրապարակում: • Մի խումբ տնտեսվարող սուբյեկտների կամ արդյունաբերության որևէ ճյուղում գործունեություն իրականացնողների ազատում է հիմնական մրցակցային օրենքի պարտադրված նորմերից: 			
4	Արդյո՞ք տարբերակը սահմանափակում է հաճախորդների ընտրության	<ul style="list-style-type: none"> • Սահմանափակում է հաճախորդների հնարավորությունը՝ որոշելու ումից գնումներ կատարել: • Նվազեցնում է հաճախորդների 			

<p>հնարավորությունները կամ տեղեկատվության հասանելիությունը:</p>	<p>շարժունակությունը ապրանքների և ծառայությունների մատակարարների միջև՝ բարձրացնելով մատակարարին փոխելու բացահայտ կամ թաքնված ծախսերը:</p>			
---	---	--	--	--

Հուշում. ՏՀԶԿ-ն, կարգավորողներին աջակցելու համար, հրապարակել է հատուկ ձեռնարկ մրցակցության ստուգման թեսթ լրացնողների համար: Այն հասանելի է հետևյալ հասցեով.
<http://www.oecd.org/competition/assessment-toolkit.htm>.

8. Ինչպե՞ս գնահատել օգուտները:

Պետության գործողությունների թիրախը օգուտն է, առանց որի հստակ կանխատեսման այն չպետք է գործի: Պետության գործողությունների արդյունքում ստացվող օգուտը՝ այդ գործողություններից ստացված որևէ դրական արդյունքն է, անկախ այն բանից այն նպատակներով սահմանված ուղղակի արդյունք է (ինչպես սահմանված է եղել նպատակներում), թե երկրորդական արդյունք, որը նույնպես շահավետ է:

Վանդակ 14 - Օգուտների հաշվի առնելը

Օգուտները կարող են ընդունել տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրին վերաբերվող տարատեսակ ձևեր: ԿԱԳ-ում ներկայացվող օգուտների ընդունելի տեսակները ներառում են.

- **Սպառողների մասով օգուտներ.** Ցավի և տառապանքի նվազեցում, տեղեկատվության հասանելիության բարձրացում, ցածր գներ, ապրանքների, աշխատավայրերի և ծառայությունների անվտանգության բարելավում և այլն:
- **Ձեռնարկատիրության ոլորտի օգուտներ.** Սեփականության, գույքի վնասի նվազեցում, կորցված արտադրական ժամանակի նվազեցում, կատարողական ծախսերի կրճատում, շուկայում մրցակցային դիրքի պահպանում կամ կարգավորման թափանցիկության, որոշակիության և կանխատեսման բարձր մակարդակ:
- **Պետական օգուտը.** Կարգավորման հստակ գործընթացներ և պահանջներ, իջեցված մշտադիտարկման և հարկադրման ծախսեր, կատարողականության բարձր մակարդակ, և
- **Համայնքային ոլորտի օգուտներ.** Բնապահպանական նորմերի բարելավում, ապահով աշխատավայրեր, հանրային ծառայությունների և հնարավորությունների բարձր հասանելիություն, ռեսուրսների արդյունավետ տնտեսական օգտագործում և տնտեսական աճի բարձր մակարդակ և կենսաապահովման բարելավում:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր ազդեցությունները կարող են արտահայտվել դրամական ձևով (դրամ/տարի): Մասնավորապես սոցիալական և շրջակա միջավայրին վերաբերվող ազդեցությունները և նկատելի օգուտները հաճախ միանգամից չէ, որ ձեռք են բերում շուկայական արժեք: Այդուհանդերձ, եթե դուք կատարում եք ընդհանրական պնդումներ, օրինակ, բարելավված անվտանգություն և առողջություն կամ ապահով ճանապարհներ, ապա անհնար կլինի պարզել, թե որ տարրերակն է ապահովում ավելի մեծ պաշտպանություն:

Այս դեպքում, աշխատեք օգտագործել այնպիսի չափման համակարգեր, ինչպիսիք են՝ փրկված կյանքերի քանակը, կանխված մահացու վթարները, աղքատությունից ազատված տարեց անձանց քանակը և այլն: Այլընտրանքորեն, կարող եք օգտագործել մի շարք վստահություն ներշնչող մեթոդներ, որոնք թույլ են տալիս համեմատել բազմաթիվ տարբերակներ:

Ընդհանուր առմամբ, գաղափարն այն է, որ օգուտը արտացոլում է ռիսկի արժեքը (ծախսը) տվյալ քաղաքականության միջամտությունից խուսափելու արդյունքում (այլընտրանքային ծախսերի սկզբունք):

Եթե, օրինակ, քաղաքականությամբ հասցեագրված է որևէ տարածքի աղտոտվածության խնդիր և դուք համոզված չեք, թե որոնք են աղտոտող գործարանի հանդեպ ներկայացված ֆիլտրի կամ զտիչի գնման, տեղադրման և պահպանման պահանջի օգուտները, դուք կարող եք կիրառել ներքևում նշված գնահատման մեթոդներից որևէ մեկը.

- **Վճարելու պատրաստակամությունը.** Որքան է հանրությունը պատրաստ վճարել ռիսկի հավանականությունը նվազեցնելու համար: Մեր օրինակում, եթե պահանջվող զտիչները նվազեցնում են աղտոտվածության ռիսկը, հետազոտության մասնակից մարդկանց կողմից բացահայտված գումարի քանակը հաստատում է տրված քաղաքականության միջոցառման օգուտները:
- **Հիվանդության արժեքը.** Առողջապահական համակարգի կողմից առողջության վնասները վերացնելու ուղղությամբ կատարված ծախսերը: Մեր օրինակում, զտիչները կնվազեցնեն հիվանդ մարդկանց քանակը և այդպիսով, աղտոտվածությունից առաջացած հիվանդությունների քանակը:
- **Մարդկային կապիտալի մոտեցումը.** Փրկված մարդկային կյանքերի քանակը, որը ստացվում է կյանքի ժամանակահատվածում հաշվարկված կուտակային եկամտի զուտ արժեքից (աշխատավարձից): Մեր օրինակում, օգուտները հավասար են վնասված տարածաշրջանի միջին աշխատողի կուտակային աշխատավարձի արժեքին, որի կյանքի տևողությունը հնարավոր է կրճատվեր, եթե զտիչները տեղադրված չլինեին:
- **Ընդունելու պատրաստակամությունը.** Սա հատկապես վերաբերվում է հավելավճարային աշխատավարձեր ստացող աշխատողներին: Մեր օրինակում, օգուտը հավասար է այն հավելավճարի չափին, որի դիմաց տվյալ շրջանում աշխատողները պատրաստակամ էին շարունակել աշխատել առանց զտիչների գործարանում:
- **Հեղոնիստական գնորոշում.** Սա մեթոդ է, որը թույլ է տալիս անուղղակիորեն գնահատել ապրանքի հատկանշային արժեքը, որը չունի դրամային արտահայտում շուկայում՝ այն ապրանքների գների տարբերության միջոցով, որոնց գները ի գկզբանե կախված են դրա հատկանիշներից: Օրինակ, թարմ որսած ձկան արժեքը կարող է գոյանալ այն գետի ջրի որակական արժեքից, որտեղից այն որսացել են:

Վանդակ 15 - Ազդեցությունների ոչ շուկայական գնահատման օրինակներ

Հետևյալ օրինակը ցույց է տալիս, թե ինչպես խցանումների օրինակը կարող է գնահատվել տարբեր մեթոդներով:

Լոռայան արժեքը (Հեղոնիստական գնորոշման մեթոդ)

Փաստը ցույց է տալիս, որ խցանումների առկայության դեպքում երթևեկության աղմուկը մեծանում է մեքենաների շարժիչի միացման, վարման և արգելակման և առավել ագրեսիվ վարորդների պահվածքի պատճառով (օրինակ, ազդանշանելը): Ծանրաբեռնված ճանապարհներին մոտ բնակված լինելը գնային տարբերություն է առաջացնում: Պատկերացնենք համատիրությունում, որտեղ կան լրիվ նույն հատկանիշներով 20 տներ, տունը, որը գտնվում է հարավային ծայրամասում հարակից է ծանրաբեռնված մայրուղուն, մինչդեռ հյուսիսային մասում գտնվող տունը՝ հանգստի գոտուն: Համատիրության հատկանիշների վերաբերյալ տվյալներ հավաքելիս պարզվում է հանգստի գոտուն հարակից տան արժեքը 150 մլն դրամ է, մինչդեռ մյուս տունը, որը գտնվում է հարավային մասում, արժե 100 մլն դրամ:

Հաշվի առնելով այս գները և տների հատկանիշների նմանությունը, կարող ենք եզրահանգել, որ լոռայան արժեքը, հատկանիշ որ հարավային տունը չունի, 50 մլն դրամ է:

Ասթմայի նվազեցում (Հիվանդության ծախսի մեթոդ)

Տրանսպորտային խցանումները աղտոտում են օդը և առաջ բերում երեխաների մոտ ասթմայի առաջացման մեծ ռիսկեր: Ենթադրենք, որ աղտոտված օդի ազդեցությանն են ենթարկվել 2000 երեխա և բուժիչ միջամտության արժեքը 3 մլն դրամ / տարի է ամեն մի երեխայի համար 5 տարվա կտրվածքով, տվյալ տարածաշրջանում երեխայի ասթմայով տառապելու ռիսկի նվազեցման վիճակագրական արժեքը 30 մլն դրամ է.

$$2,000 * 3,000 * 5 = 30 \text{ մլն դրամ}$$

Հուշում.

Տնտեսագիտության մեջ ոչ շուկայական ապրանքների դրամականացումը կարող է պահանջել փորձագիտական գիտելիքներ, որի համար կարող եք դիմել ձեր վարչության կամ ԿԱԳ մարմնի տնտեսական վերլուծաբաններին: Կարող եք օգտվել նաև տվյալ քաղաքականության այլ ոլորտներում կամ երկրներում կատարված գնահատումներից:

9. Ժամանակի հաշվառում՝ դիսկոնտավորում

Ժամանակը գործոն է, որը ազդում է ազդեցության ողջ ուժգնության (արժեքի) վրա երկու պատճառներով.

- Փողը ժամանակի ընթացքում հակում ունի աճելու (սոցիալական բարգավաճման շնորհիվ օգուտները և ծախսերը հարաբերականորեն ավելի կէժանան):
- Մարդիկ չեն սիրում սպասել (զուտ ժամանակային առավելություն):

Այլ կերպ ասած, ազդեցությունները պետք է ենթարկվեն դիսկոնտավորման: Դիսկոնտավորումը մի գործընթաց է, որի ժամանակ ծախսերի (օգուտների) ապագա արժեքը բերվում է նրանց ներկա արժեքին: Երբ դուք գիտեք, որ տարբերակի ազդեցությունը տևելու է մի քանի տարի, կիրառիր այսպես կոչված՝ «դիսկոնտավորման տոկոսը»՝ ստորև նշված բանաձևին համապատասխան՝

$$\text{Ապագա "n" տարիների դիսկոնտավորման գործոն} = \frac{1}{(1 + r)^n}$$

Որտեղ դիսկոնտավորման դրույքը ֆիքսված է $r = 10\%$ մակարդակի վրա:

Դիսկոնտավորման տոկոսը ամեն տարի դրական և բացասական ազդեցությունների արժեքից հանվող «բացասական տոկոս» է: Պատկերավոր դարձնելու համար նշենք, որ սա բանկային տոկոսադրույքի հակառակն է, որն առաջարկում են բանկերը, երբ դուք փոխանցել եք ձեր խնայողությունները ձեր բանկային հաշվին: Տարիների ընթացքում, ի շնորհիվ բանկային տոկոսադրույքի, ներդրված խնայողությունները աճում են: Դիսկոնտավորման տոկոսադրույքը աշխատում է ճիշտ հակառակը, քանի որ ձեր այսօրվա ներդրված փողը ավելի պակաս արժեք է ունենալու վաղը: Այսինքն, այդ տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան է այն արժեզրկվում ժամանակի ընթացքում:

ՕԿԱԿ-ի կողմից մշակված մասնավոր հատվածի կատարողական ծախսերի հաշվիչը ավտոմատ կերպով հաշվում է ընդհանուր ուղղակի կապիտալ ծախսերի ներկա արժեքը (PV), որը ընդգրկում է համապատասխան պահպանման ծախսերը ըստ այս բանաձևի.

$$\text{Ծախսերի դիսկոնտավորված արժեք (PV)} = \sum_{t=0}^{t=n} \frac{C_t}{(1+r)^t}$$

Որտեղ, կապիտալի և պահպանման ծախսերը տրված t տարում հավասար են C_t կյաքնի n տարիների դեպքում (սկսած 0 տարվանից):

Եթե դուք կարող եք քանակական դարձնել օգուտները և նախագծել դրանց ի հայտ գալը ժամանակի մեջ, ինչպես որ դա արվել է ծախսերի համար, ապա կիրառելի է տարբերակի Ջուտ ներկա արժեքը (ՋՆԱ): ՋՆԱ-ն հաշվարկում է օգուտների և ծախսերի միջև տարբերության ներկա արժեքը՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$\begin{aligned} \text{ՋՆԱ} &= \sum_{t=0}^{t=n} \frac{B_t - C_t}{(1+r)^t} \\ &= (B_0 - C_0) + \frac{(B_1 - C_1)}{(1+r)} + \frac{(B_2 - C_2)}{(1+r)^2} + \dots + \frac{(B_T - C_T)}{(1+r)^T} \end{aligned}$$

ՋՆԱ-ն հաշվարկում է, թե որքան զուտ օգուտների ապագա հոսք է հնարավոր:

- $\text{ՋՆԱ} < 0$ տարբերակը պետք է մերժվի, եթե կան այլ դրական ՋՆԱ արժեքով այլընտրանքներ: Ամեն դեպքում անհրաժեշտ է հիմնավորում կատարել, եթե նույնիսկ բարձր ծախսերը (համեմատած օգուտների հետ) ապացուցված են (օրինակ, խնդրի հրատապությամբ պայմանավորված, կամ փաստացի արժեքի դատողություններից ելնելով):
- $\text{ՋՆԱ} \geq 0$ տարբերակը պետք է դիտարկվի, քանի դեռ ծախսերի և օգուտների բաշխվածությունը տարբեր սոցիալական խմբերի միջև կարող է համարվել ընդունելի: Մեծ (դրական) ՋՆԱ-ն համապատասխանում է քաղաքականության տարբերակի տնտեսական մեծ դրական ազդեցությանը:

10. Լրացրեք ԿԱԳ հարցաշարը

ԿԱԳ Հարցաշարի 5-րդ բաժինն արդեն ձևավորված է ազդեցությունների հիմնական տեսակներին համապատասխան, որոնք կարող են վերլուծության ենթարկվել ԿԱԳ-ում:

Կառավարության փորձագիտական ծառայությունները հարմար դիրքում են գտնվում որոշակի ազդեցությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն տրամադրելու համար: Մասնագիտացված նախարարությունների հետ կառուցողական երկխոսություններ վարելը սկզբունքային է հնարավոր լավագույն գնահատումն իրականացնելու համար: Մասնավորապես, ԿԱԳ-ի 5-րդ բաժինը տարբերակվում է հետևյալ կերպ.

- Ա) Տնտեսական ազդեցությունների գնահատում (որը պետք է իրականացվի Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ);
- Բ) Մրցակցության և պետական օժանդակության վրա ազդեցության գնահատում (պետք է իրականացվի Էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ համատեղ);
- Գ) Հարկաբյուջետային և բյուջետային ազդեցությունների գնահատում (որը պետք է իրականացվի Ֆինանսների նախարարության հետ համատեղ);
- Դ) Սոցիալական և հանրային անվտանգության ազդեցությունների գնահատում (որը պետք է իրականացվի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ);
- Ե) Առողջապահական ազդեցության գնահատում (որը պետք է իրականացվի Առողջապահության նախարարության հետ համատեղ);
- Ձ) Շրջական միջավայրի ազդեցության գնահատում (որը պետք է իրականացվի Բնապահպանության նախարարության հետ համատեղ); և
- Է) Կոռուպցիայի ստուգում (որը պետք է իրականացվի Արդարադատության նախարարության հետ համատեղ):

Բաժինը տրամադրում է օրինակներ ակնկալվող համապատասխան ազդեցությունների վերաբերյալ, որոնք կարող են ի հայտ գալ և թվարկվում է հարցեր, որոնք թույլ են տալիս պարզ կերպով բնութագրել ազդեցությունների բնույթը և ուժգնությունը, և բացատրել, թե ինչու այսպիսի ազդեցությունները կարող են ի հայտ գալ:

Բաժիններ 5 Ա-ն և 5 Գ-ն պետք է մշակվեն համապատասխանաբար մասնավոր հատվածի կատարողական ծախսերի հաշվիչի և հանրային ոլորտի կատարողական ծախսերի հաշվիչի ազդեցությունների հիմունքներով: Օրենսդրության Կարգավորման Ազգային Կենտրոնը / ԿԱԳ մարմինը/ պատասխանատու է այս հաշվարկների համար:

6-րդ ԲԱԺԻՆ - Տարբերակների համեմատում և ընտրություն

1. Ինչու՞ է դա կարևոր

ԿԱԳ-ի հիմնական նպատակներից մեկը կառավարությանը օժանդակելն և ուղղորդելն է նրա կողմից իրականացվելիք գործողությունների ուղղությունը պատշաճ որոշելու հարցում՝ հաշվի առնելով առկա իրավիճակը, տվյալները և քաղաքականության առանցքային նպատակները: Հաշվարկների ավարտին առաջարկվելու են համապատասխան տարբերակները:

Այս քայլի նպատակն է այլընտրանքային ամեն մի տարբերակի ուժեղ և թույլ կողմերին կշիռ տալը, որպեսզի եզրակացություն կազմենք, թե որն է նպատակներին հասնելու համար առավել էֆեկտիվ և արդյունավետ, ամենաքիչ կամ քիչ զգալի թերություններով տարբերակը: Կհասկանաք, որ չկա կատարյալ լուծում: Բոլոր տարբերակներն էլ կունենան առավելություններ և թերություններ: Ամեն մի տարբերակի «Կողմերը և դեմերը» համեմատելիս, ի վիճակի կլինեք

տալ եզրակացություն, թե որ տարբերակն է մնացածներից առավել ցանկալի: Այն հիմք կհանդիսա կառավարությանը առաջարկություն կատարելու համար:

Եթե ոչ մի տարբերակ նախընտրելի չէ, մանրամասներ դա ձեր ԿԱԳ հաշվետվության մեջ: Բացատրեք, թե ինչու ունեք այնպիսի դիրքորոշում, որ չեք կարողանում տալ պարզ եզրակացություն: Սա հենց ինքնին հանդիսանում է արժեքավոր ներդրում որոշում կայացնելու համար:

2. Համապատասխան մեթոդների ընտրությունը

Այս փուլում նպատակահարմար է իրականացնել հետևյալը.

- Դիտարկել ամեն մի տարբերակի բոլոր դրական և բացասական ազդեցությունները ի հակադրություն մեկը մյուսին, անկախ այն բանից, թե դրանք արտահայտված են քանակական, որակական կամ ֆինանսական ձևերով:
- Կատարել տարբերակների միջև համեմատություն ընդհանուր օգուտների և բացասական հետևանքների, կատարողական ծախսերի և հարկաբյուջետային ազդեցությունների վերաբերյալ: Օրինակ, մի տարբերակը կարող է շատ ավելի ծախսեր պարունակել և լինել համեմատաբար ոչ էֆեկտիվ, մեկ այլ տարբերակ կարող է ունենալ հանրության կողմից էական աջակցություն, և երրորդ տարբերակը կարող է ունենալ ամենաքիչ ծախսերով մեծ ազդեցություն:
- Ամփոփել ամեն մի տարբերակի առանցքային եզրակացությունները, որ պետք է իրականացվի ԿԱԳ-ում:

Տարբերակների միջև ընտրություն կատարելու համար համոզվեք, որ կան համեմատության համար նախատեսված տարրեր ամեն մի տարբերակի համար: Գոյություն ունեն մի քանի հնարավոր մոտեցումներ և մեթոդներ, որոնք թույլ են տալիս համեմատել բացահայտված տարբերակները: Համապատասխան մեթոդի ընտրությունը առանցքային է: Կարող եք դա անել երկու հիմնական հարցերի պատասխանելուց հետո:

- **Ի՞նչ են առաջադրանքի արդյունքում ստանալու.** Սա քաղաքականության նպատակի էության ճշտումն է և ձեր մանդատի ներքո գործողությունների հնարավոր չափը:
- **Արդյոք տվյալները վստահելի են.** Սա վերաբերվում է տվյալների միջավայրին: Տվյալների ցանկացած բացթողում, կապված ազդեցությունների գնահատման հետ, կարևոր է (օրինակ՝ եթե որոշ ազդեցություններ հնարավոր չէ արտահայտել դրամային տեսքով կամ քանակապես): (տվյալների հավաքագրման վերաբերյալ տես ներքևում):

Հետևաբար, կարող եք հաշվի առնել հետևյալ ընդունված կանոնները.

- Օգտագործիր **բազմաչափանիշ վերլուծությունները (ԲՎ)** այն դեպքում, երբ կան տարբերակների ազդեցությունների միայն որակական գնահատականներ կամ կան տվյալների խառը տեղեկատվություններ, օրինակ, քանակական ծախսեր (մասնակիորեն) բայց որակական օգուտներ, կամ
- Օգտագործիր **ծախս/օգուտ վերլուծություն (ԾՕՎ)** եթե հնարավոր է քանակապես արտահայտել և ծախսերը և օգուտները: Քաղաքականության առաջարկը կարող է

համարվել արժեքավոր, եթե օգուտները գերազանցում են, կամ, ամենաքիչը, ծախսերը հիմնավորված են:

- Օգտագործիր **Ճախս/էֆեկտիվություն վերլուծությունը (ՇԷՎ)**, եթե ծախսերը արտահայտված են քանակապես և հնարավոր է ընդունել, որ համեմատվող տարբերակները հավանական է, որ կապահովեն համարժեք օգուտների մակարդակներ (որակական):

Հուշում. այս ձեռնարկի հավելվածը մանրամասն ներկայացնում է երեք մեթոդները:

3. Տարբերակների ներկայացումը

Նախ, ամեն մի տարբերակի ազդեցությունը պետք է ամփոփված լինի ըստ ազդեցությունների ոլորտների, որոնք են՝ ընդհանուր օգուտները և թերությունները, ձեռնարկությունների և քաղաքացիների կատարողական ծախսերը և հարկաբյուջետային ծախսերը: Այս ամփոփման մեջ ազդեցությունները չպետք է միավորված լինեն: Ամեն մի կարգում ներառեք մեկը մյուսի հանդեպ և բացասական և դրական հետևանքները:

- «Որակական բնութագրում» սյունակում ներառեք ազդեցության համառոտ նկարագիրը, ինչպես է ամեն մի կարգի համար տարբերակը թե բացասական և թե դրական գնահատվել: Այս որակական միավորները ամփոփում են հետևանքների ամեն մի կարգի կարևոր կողմերը: Հարմար է տարբերակի բաշխողական ազդեցությունները ներառել տարբեր խմբերում. Ով կշահի և ով կտուժի առաջարկվող տարբերակի կողմից:
- Քանակական արտահայտում սյունակում մուտքագրեք ցանկացած հավաքագրված քանակական տեղեկատվություն. օրինակ, առկա մարդկանց քանակը թիրախային հանդիսացող հասարակությունում կամ ազդեցության ենթարկված ձեռնարկությունների քանակը:

4. Նախընտրելի տարբերակի առաջարկում

Ընդհանրապես, առաջարկեք այն տարբերակը, որը ապահովում է ամենաշատ օգուտները ամենաքիչ ծախսերով և մի առաջարկեք այնպիսի տարբերակ, որտեղ թվում է, թե ծախսերը անհամամասնական են օգուտներին:

Երբ վերլուծությունները որակական են, դատողությունը այն մասին, թե որ տարբերակն է բավարարում արդյունավետություն, մասամբ կլինի սուբյեկտիվ: Այս դեպքում, համեմատեք տարբերակները և բացատրեք որքան հնարավոր է պարզ, թե ինչու եք ընտրել ձեզ համար նախընտրելի տարբերակը, որը թվում է, թե ապահովում է ամենաբարձր օգտակարությունը ամենացածր ծախսերով:

Հիշեք, որ որոշ դեպքերում, առաջարկությունը չի լինի մեկ տարբերակի ընդունումը, այլ կարող է լինել խառը կամ համակցված տարբերակների (գործիքների) ընդունում, որ միասին հասցեագրում են խնդրի հիմնական շարժապատճառները:

7-րդ բաժին - Ընդունումից հետո հեռանկարների դիտարկում

1. Ի՞նչն է կարևոր

Կառավարության որոշումների իրականացումը կարող է պահանջել էական փոփոխություններ, որոնց ի հայտ գալու մասին ԿԱԳ-ի ընթերցողները պետք է տեղեկացված լինեն: Իրականացման հետ կապված ծախսերը պետք է հաշվարկված լինեն և հաշվի առնված, երբ իրականացվում է տարբերակի ծախսերի արդյունավետության չափագրում: Դրանք փաստացի կարող են լինել այնպիսին, որ փոփոխեն առաջարկված տարբերակի ընտրությունը: (Որպես տարրական և ծայրահեղ օրինակ մտածեք միջուկային ռադիոակտիվ թափոնի արտանետումների մասին: Շրջակա միջավայրի տեսանկյունից բարենպաստ լուծում կլինի, եթե թափոնը պահեստավորվի լուսնի վրա, սակայն իրականացման ծախսերը պարզ է, որ կգերակշռեն օգուտներին):

2. Ընդունումից հետո կարգավորումներ, որոնք անհրաժեշտ է դիտարկել

Մտածեք տարատեսակ խնդիրների կարգերի մասին, որոնց առաջարկը կարող է առերեսվել.

- **Քաղաքական ռիսկեր.** Հաշվի առեք ձեր առաջարկի քաղաքական հետևանքները և հավանությանը / դիմադրությանը, որին առաջարկը կարող է հանդիպել կառավարությունում, Ազգային Ժողովում և այլ շահառուների կողմից:
- **Տնտեսական սահմանափակումներ.** Մտովի հաշվ առեք ռեսուրսները: Թե մշտադիտարկումը և թե հետիրականացման գնահատումները ռեսուրս սպառող են, և եթե սպասվում է, որ դրանք կլինեն մասնավորապես ծախսատար, ապա դրանք կարող են ազդել նախընտրելի տարբերակի ընտրության վրա:

Ստեղծեք նաև **իրականացման ժամանակացույց**, այսինքն, հնարավոր է արդյոք կառավարության որոշման իրականացումը տեղի ունենա անմիջապես ընդունումից հետո կամ արդյոք իրականացման համար հատկացված է հավելյալ ժամանակահատված կամ անցումային փուլ: Սա հավանական է, որ առաջացնի այլընտրանքային ծախսեր:

5-րդ աղյուսակը պատկերում է որոշ դատողություններ, որ կարող եք հաշվի առնել հետևյալ փուլերում:

Աղյուսակ 5- Օգտակար խորհուրդներ, որոնց մասին անհրաժեշտ է մտածել քաղաքականության ցիկլի մշակումից առաջ

Փուլեր	Քաղաքական նկատառումներ	Տնտեսական նկատառումներ	Ընթացակարգային նկատառումներ
<p>Առաջարկի ընդունում</p>	<ul style="list-style-type: none"> - Որո՞նք են ցուցումները, որ ես ստացել եմ վերադասից / կառավարությունից, և որքանո՞վ է այս առաջարկը համապատասխանում նրանց: - Հնարավո՞ր է, որ այս առաջակը առաջացնի քաղաքական համաձայնություն կառավարությունում / Ազգային ժողովում: 		<ul style="list-style-type: none"> -Որո՞նք են քայլերը, որ ես պետք է իրականացնեմ մինչև առաջարկի պաշտոնական ներկայացումը: -Ո՞րն է հավանական ժամանակը կառավարության / Ազգային ժողովի կողմից քննարկումների/ ընդունման համար:
<p>Միջոցառումների իրականացում</p>	<ul style="list-style-type: none"> - Ինչպե՞ս անմիջական ազդեցության ենթարկված շահառուները կարծազանքեն դրան: -Պատրա՞ստ են նրանք դրան կամ տեղեկատվական քարոզարշավի կամ ետկանչման ժամանակահատված անհրաժե՞շտ է : 	<ul style="list-style-type: none"> - -Որո՞նք են մեր կողմից ակնկալվող հնարավոր դիմադրությունները, (օրինակ՝ չկատարման դիմաց խրախուսման, ազատ գործման, բոյկոտի դրդապատճառները և այլն) 	<ul style="list-style-type: none"> - Ե՞րբ է մեկնարկում իրականացումը: - Կա՞ն նախատեսված անցումային շրջաններ: - - Ե՞րբ պետք է ապահովել ամբողջական իրականացումը: - - Կա՞ն միջոցներ իրականացման աջակցման/դյուրացման համար:
<p>Կիրարկում</p>	<ul style="list-style-type: none"> -Ո՞վ է պատասխանատու միջոցառումների իրականացման համար: - Անհրաժե՞շտ է, որ դա լինի հանրային կառավարման առանցքային խնդիր, թե՞ այն կարող է տրվել մասնավոր գործակալների: 	<ul style="list-style-type: none"> - Որո՞նք են կիրարկման տարատեսակ ձևերի հնարավոր ծախսերը: Կարո՞ղ ենք մենք հիմնվել գոյություն ունեցող փորձի վրա: 	<ul style="list-style-type: none"> - Ինչպե՞ս պետք է կիրարկումը իրականացվի՝ ստանդարտացված ստուգումների միջոցով, թե հաջորդիվ գերակայությունների և չափորոշիչների միջոցով (ռիսկայնության վրա հիմնված մոտեցում):

<p>Մշտադիտարկում և գնահատում</p>	<p>-Ե՞րբ պետք է մշտադիտարկումը կամ <i>փաստացի գնահատումը կատարվի:</i></p> <p>-Պե՞տք է դա լինի ավտոմատացված, թե՛ քաղաքական որոշումներից ելնի:</p> <p>-Ու՞մ կողմից:</p> <p>- Ու՞մ հետ պետք է քննարկվեն արդյունքները: (օրինակ՝ Ազգային Ժողովի հետ, հանրության լայն զանգվածների հետ, ազդեցության ենթարկված շահառուների հետ, և այլն / հաշվետվությունների, սեմինարների, մամլո ասուլիսների միջոցով և այլն)</p>	<p>-Որո՞նք են մշտադիտարկման և գնահատման գործողությունների հնարավոր ծախսերը:</p> <p>- Գոյություն ունի՞ տվյալների հավաքագրման և վավերացման համակարգ, թե՛ այն պետք է կառուցվի հենց սկզբից:</p>	<p>-Ինչպե՞ս պետք է մշտադիտարկումը և գնահատումը իրականացվի գնահատման ձևավորման, տվյալների հավաքագրման, վավերացման և գործի մեջ դրվելու, մեկնաբանման և հաղորդակցման տեսանկյունից:</p> <p>- Ինչպե՞ս կարելի է շեղումները նվազեցնել:</p>
---	--	---	--

3. Մշտադիտարկման և գնահատման գործողությունների նախագծում

Վանդակ 16 - Մշտադիտարկումը և գնահատումը (ՄԳ) սահմանում

Մշտադիտարկումը և գնահատումը նույն բանը չեն.

- **Մշտադիտարկումը** հատուկ ցուցանիշների վերաբերյալ տվյալների շարունակական և համակարգված հավաքագրումն է՝ նպատակի առաջընթացի և ձեռքբերման վերաբերյալ նշումներով, ղեկավար անձնակազմին և ընթացիկ, զարգացման միջամտության հիմնական շահառուներին տրամադրելու համար:
- **Գնահատումը** միջամտության համապատասխանության, կատարողականության, արդյունավետության և ազդեցության փուլային գնահատում է (թե սպասված և թե չսպասված) առաջադրված նպատակների համեմատությամբ:

Մշտադիտարկման և գնահատման գործողությունների մանրամասն ուրվագիծը որպես կանոն լավագույնս ձևավորվում է միջոցառումների ընդունումից հետո: Ակնհայտ է, որ անօգուտ է տրամադրել ՄԳ մանրամասն տեղեկատվություն քաղաքականության այնպիսի տարբերակների վերաբերյալ, որոնք չեն իրականացվելու: Այնուամենայնիվ, այս փուլում խնդրվում է ուրվագծել ցուցանիշները, քանզի..

- ռեսուրսները սահմանափակ են և նաև ՄԳ գործողությունները կարող են լինել ծախսատար: Կարևոր է հաշվարկել այսպիսի ռեսուրսների (օրինակ՝ աշխատակազմի թիվ, (արտաքին աղբյուր) հետազոտություններ, հանրային քննարկումներ և այլն) մակարդակը այնպես, որը համամասնական լինի առաջարկվող միջոցառումների շրջանակներին և ազդեցությանը: Որպես հիմնական կանոն, տվյալների հավաքագրումը չպետք է ավելի ծախսատար լինի այն տեղեկատվության արժեքից, որ դրանք տրամադրում են, և
- կառավարության որոշումը քաղաքականության ցիկլի մաս է, և կարևոր է տեղադրել կամուրջի ստեղծման համար անհրաժեշտ աղյուսները. կանխատեսող վերլուծություններից մինչև ազդեցության գնահատում, որպեսզի լավագույն հիմքերը ստեղծվեն ապագա միջամտությունների համար:

Նախապես, ՄԳ գործողությունների մասին մտածելիս, տվեք ինքներդ ձեզ հետևյալ հարցերը.

- **Էություն:** -ինչպե՞ս է այս տարբերակը գնահատվելու, տեսնելու համար, թե ինչպես է այն աշխատում:
 - Ո՞րն է ՄԳ-ի առանցքը և նպատակը:
 - Որքանո՞վ ՄԳ կառուցվածքն արդեն գոյություն ունի: Կա՞ հատուկ օրենսդրական հիմքերի կարիք:
- **Ժամանակագրում:** - Ե՞րբ պետք է արդյունքները պատրաստ լինեն և օգտագործվեն:
- **Տվյալներ:**- Արդո՞րք քաղաքականության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի է:

- Գոյություն ունի նախնական տեղեկատվություն՝ նախնական և հետագա համեմատությունների համար:
- Ինչը և որտե՞ղ է առաջացնում տվյալների ճեղքվածքը: Կարելի՞ է այժմ դրանց հասցեագրել:
- Ինչպե՞ս կարող եմ կազմակերպել վերջնական օգտվողի հետադարձ կապը:
 - **Գործող անձիք:** - Ովքե՞ր են այսպիսի տեղեկատվություն տրամադրող և օգտագործող առանցքային գործող անձիք:
- Ո՞րը կլինի այսպիսի գործող անձանց դերակատարումը: Ո՞վքեր են պատասխանատու դրա համար:
 - **Օգտագործումը.** Ինչպե՞ս և ու՞մ պետք է ՄԳ արդյունքները հաղորդվեն:

Հետյալ հարցերը կօգնեն **կառուցել ՄԳ քո տարբերակը.**

- Որո՞նք են ՄԳ գործողությունների առանցքը և նպատակը:
- Ե՞րբ պետք է արդյունքները պատրաստ լինեն և օգտագործվեն:
- Ինչպե՞ս պետք է հավաքագրվեն զարգացումների հետագա վերլուծություններին վերաբերվող ցուցանիշերի և այլ գործոնների տվյալները:
- Որքանո՞վ ՄԳ կառուցվածքն արդեն գոյություն ունի: Անհրաժեշտ են նոր կարողունակություններ: Կա՞ կարիք հատուկ օրենսդրական հիմքերի համար:
- Արդյո՞ք նախնական իրավիճակը բավականաչափ հայտնի է, թե հետագա տվյալների հավաքագրման կարիք կլինի առաջարկի ընդունումից հետո:
- Ովքե՞ր են այսպիսի տեղեկատվություն տրամադրող և օգտագործող առանցքային գործող անձիք: (օրինակ՝ պետական մարմինները, միջանկյալ մարմինները, ինչպիսիք են՝ անկախ կարգավորողները, գործողություն իրականացնողները, շահառուները, քաղաքացիները և այլն):
- Ընդհանուր առմամբ, որ՞ն է լինելու այս գործող անձանց դերակատարումը: Ով է պատասխանատու դրա համար:
- Ինչպե՞ս է տեղեկատվությունը համատեղ ներկայացվելու և ի վերջո ամփոփվելու:
- Լրացուցիչ ի՞նչ անհրաժեշտ կլինի այս տեղեկատվության հավաքագրման համար:
- Ինչպե՞ս և ու՞մ պետք է ՄԳ արդյունքները հաղորդվեն: (օրինակ՝ Ազգային Ժողովին, հանրության լայն զանգվածներին, ազդեցության ենթարկված շահառուներին, և այլն / հաշվետվությունների, սեմինարների, մամլո ասուլիսների միջոցով և այլն):

4. Կատարողական ցուցանիշների վրա հիմնվելը

Ինչպես մենք նշել էինք վերոհիշյալ 3-րդ բաժնում (Նպատակների սահմանում), կատարողական ցուցանիշները թույլ են տալիս հաշվարկել, թե որքանով է կառավարության որոշումը պատշաճ կերպով իրականացվել և որքանով են ձեռք բերվել դրանց նպատակները:

Վերլուծությունների այս փուլում հաշվի առեք ցուցանիշները, որոնք զարգացրել եք նպատակներին հասնելու համար, ինչպես նաև այլ ցուցանիշներ, որոնք օգտակար են հետագա միջանկյալ մշտադիտարկման համար:

Հուշում. Սույնի 3-րդ բաժինը, կապված նպատակների սահմանման հետ, կիրառելի է նաև կատարողական ցուցանիշների կարևորության և դրանց ընտրության վրա:

II ԳԼՈՒԽ - Տվյալների հավաքագրում և հանրային մասնակցություն

Տվյալների հավաքագրում

1. Տվյալների հավաքագրման պլանավորում

Խնդրի շրջանակների և էության, նախատեսվող տարբերակների տեսակների վերաբերյալ հստակ գաղափար ունենալուն պես և/կամ հավանական ազդեցության տարբերակը ճշտելուն պես, սկզբունքային է, որ ձեր փաստարկները և պատճառները հնարավորինս հիմնավորվեն: Այդ նպատակով, անհրաժեշտ է ունենալ փաստեր և տվյալներ, որոնք կլինեն համապատասխան և հուսալի: Սա ցանկացած ԿԱԳ-ի թե՛ որակական, և թե՛ քանակական գնահատումների կարևորագույն մասերից է:

Տվյալների հավաքագրումը երևի թե ամենաժամանակատար գործողությունն է ԿԱԳ-ի մշակման ընթացքում: Համենայն դեպս, ջանքերը պետք է ուղղվեն նախաձեռնության կարևորությանը:

Ուստի, անհրաժեշտ է աշխատանքներ վարել տվյալների հայիայթման ուղղությամբ և պատրաստել **տվյալների հավաքագրման ծրագիր**:

Վանդակ 17 - Տվյալների հավաքագրման ծրագիր հավանական հարցերը

- Եթե արդեն գիտեք, թե որոնք են պահանջվող տվյալների հնարավոր աղբյուրները, ապա հե՞ջտ հասանելի են դրանք:
- Քանի՞ տարվա տվյալներ են հասանելի: Պահանջում են դրանք թարմացումներ:
- Կա՞ն արդյոք բացեր տվյալներում:
- Ո՞րքան ժամանակ է պահանջվում բացակայող տվյալների հավաքագրման համար:
- Որոնք են հավանական ուղիները բացակայող տվյալները գտնելու համար:
- Անհրաժեշտ է դրանք հավաքագրել նորից, թե դա գոյություն ունեցող / ընթացիկ տվյալների հավաքագրման գործողությունների մաս է կազմում:
- Պատրաստ եք դուք / ձեր վարչությունը հավաքագրել բոլոր բացակայող տվյալները: Եթե ոչ, ինչպիսի՞ արտաքին աջակցություն է անհրաժեշտ:
- Արդյո՞ք աղբյուրները հավասարապես վստահելի են:
- Կլինի՞ տվյալների վերանայման / վավերացման կարիք: Եթե այո, ո՞վ կարող է դա անել: Ինչքա՞ն ժամանակ կտևի:

2. Գոյություն ունեցող տվյալների աղբյուրներ

Ձեռքի տակ հասանելի տեղեկատվությունը ներառում է.

- մշտադիտարկման և գնահատման հաշվետվություններ նախկին կամ նմանատիպ ծրագրերից կամ ձեռնարկումներից;
- վարչությունում առկա ավելի վաղ հետազոտություններ և խորհրդակցությունների փաստաթղթեր;
- վիճակագրական տվյալներ Ազգային վիճակագրության ծառայությունից, Եվրոստատից² և այլն;
- Եվրոպական կամ պետական գործակալությունների ուսումնասություններ և հետազոտություններ;
- շահառուների աղբյուրներ (օրինակ՝ նախկին լսումներից, կոնֆերանսներից, մամլո պնդումներից);
- ազգային գործակալություններից և հետազոտական կենտրոններից, ինչպես նաև ՍԻՆԱՊՍԵ³-ից (գիտական ինֆորմացիայի համար);
- այլ երկրների, երրորդ երկրների և միջազգային կազմակերպությունների օրինակներ և փորձեր (օրինակ՝ Համաշխարհային Բանկ, ՏՀՀԿ):

Վերջին կետը կիրառելի է, եթե Հայաստանի մասին տվյալները բացակայում են. հաշվի առեք և համեմատեք տվյալները և վերլուծությունները համարժեք երկրների վերաբերյալ:

Այս ամենին տեղյակ չլինելու դեպքում, հնարավորին չափ արագ դիմեք աջակցության ձեր վարչությունում, Օրենսդրության Կարգավորման Ազգային Կենտրոնում / ԿԱԳ մարմնում և արտաքին փորձագետներին:

3. Տվյալների բացակայության խնդրի լուծումը

Ի՞նչ տեղի կունենա, եթե ձեր ձեռքի տակ առկա չլինեն պահանջվող տվյալները:

Վանդակ 18 – Ինչպես որոշել անհայտ թվերը⁴

Կան մի շարք մեթոդներ, որոնք թույլ են տալիս ստանալ կամ դուրս բերել ազդեցությունների գնահատման համար անհրաժեշտ ցուցանիշները: Դրանք ներառում են.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

² <http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/eurostat/home/>

³Քաղաքականության Աջակցման Գիտական Տեղեկատվություն Եվրոպայում (ՍԻՆԱՊՍԵ)-ն ծառայում է որպես էլեկտրոնային համայնք և էլեկտրոնային գրադարան հարթակ ԵՄ քաղաքականության ստեղծման և կառավարման փորձաքննությունների ավելի լավ օգտագործման/աջակցման համար: տես <http://europa.eu/sinapse/>:

⁴ Վերցված է Եվրոպական հանձնաժողովի ԱԳ-ի ուղեցույցից (2009), ՀԱՎԵԼՎԱԾ 11.3.

- Ստուգեք թվերի ստացման մանրամասները: Տարբեր աղբյուրներ կարող են օգտագործել տարբեր գործառնական սահմանումներ:
- Օգտագործեք բազմաթիվ աղբյուրներ, բայց համոզվեք, որ ձեր գնահատումները լինեն միասնական:
- Եթե կարող եք, խուսափեք այնպիսի աղբյուրների օգտագործումից, որոնք չեն տրամադրում գործառնական սահմանումներ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- Համակարգված կերպով իրականացնել շահագրգիռ կողմերի հարցում:
- Եթե չկա բավարար ժամանակ/ռեսուրսներ արտահերթ հարցում իրականացնելու համար, ապա հիմնվեք ազգային/տեղական հարցումների վրա, որոնք պարբերական հիմունքներով իրականացվել են ճանաչված կազմակերպությունների կողմից (հետազոտական կենտրոնների, առաջատար լրագրերի)։

ՀՈՒՇՈՒՄ

- Բացարձակ արժեքները որոշելու համար օգտագործեք ցուցանիշներ, որոնք շատ չեն տարբերվում վայրից վայր (մահացությունների թիվը ստանալու համար մահացության ցուցանիշը բազմապատկեք բնակչության թվաքանակով՝ բնակչության ռեգիստրի փաստաթի թվերը օգտագործելու փոխանեն)։
- Պարզեք, թե արդյոք առկա են համընդհանուր կիրառելի կանոններ:
- Օգտագործեք ցուցանիշներ, որոնք բնութագրում են նմանատիպ երևույթներ:
- Եթե երկու փոփոխականների միջև կապը հայտնի է, ապա օգտագործեք դրանցից մեկը մյուսը ստանալու համար (բնակչության աճը որպես ֆունկցիա ժամանակից և նախորդող աճի տեմպերից)։
- Սահմանեք շեմեր՝ հղում կատարելով մեկ այլ փոփոխականի (տակդիր հագնող երեխաների առավելագույն թիվը չի կարող ավելի մեծ լինել, քան զրոյից չորս տարեկան տարիքային խմբի բնակչության թիվը)։
- Օգտագործեք տրիանգուլացիա, այն է՝ քանակության գնահատման համար առանձին մոտեցումների/տվյալների աղբյուրների օգտագործում և արդյունքների համեմատում:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

- Ստուգեք փորձագետների որակավորումը:
- Օգտագործեք նրանց գնահատումների միավորման և գնահատումների սխալականության սահմանի նվազեցման մեթոդներ (օրինակ՝ ստորև նշված Delphi մեթոդը)։

4. Տվյալների հավաքագրման մեթոդներ

Գոյություն ունեն տվյալների հավաքագրման բազմաթիվ մեթոդներ: Երբ ընտրում եք մեթոդներից մեկը, ապա հավաստիացեք, որ՝

- մեթոդն արդյունավետ է (այսինքն, այն թույլ է տալիս հավաքագրել այնքան շատ տեղեկատվություն հիմնավորված ծախսերի վերաբերյալ, որքան անհրաժեշտ է) և
- հավաքագրված տվյալները ճիշտ են (այսինքն, համոզված եք, որ տվյալներն արտացոլում են այն, ինչը ենթադրվում է, որ դրանք պետք է գնահատեն) և արժանահավատ (այսինքն, տվյալների հավաքագրման և մշակման գործընթացի կրկնման դեպքում կստացվեն նույն արդյունքները):

Տվյալների հավաքագրման մեթոդները կարող են դասակարգվել որակական և քանակական տեսակների: Դրանցից մի քանիսն նկարագրված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 6 – Տվյալների հավաքագրման մեթոդներ

Որակական մեթոդներ	Նկարագրություն
Ազատ հարցազրույցներ	Դրանք սովորաբար օգտագործվում են քաղաքականության նույնականացման և ձևավորման սկզբնական փուլերում և հնարավորություն են ընձեռում իրականացնել նախնական ուսումնասիրություն և ամփոփում: Հարցման այս ազատ մոտեցումը թույլ է տալիս փոփոխել կամ հարմարացնել հարցերը պատասխանողի ինտելեկտին, ընկալմանը և համոզմունքներին համապատասխան: Այնուամենայնիվ, ի տարբերություն կառուցվածքային հարցումների, տվյալների վերարտադրողականությունը և համադրելիությունը շատ ավելի բարդ է:
Մտային գրոհ DELPHI մեթոդ	Այս մեթոդները պահանջում են փորձագիտական խմբերի ստեղծում (պետական կառավարման մարմնում՝ ներքին և/կամ դրանից դուրս՝ արտաքին), որոնց առաջարկում են կարծիքներ տրամադրել: Երկու մեթոդն էլ հարմար են խնդրի ձևակերպման և տարբերակների բացահատման փուլերի համար: Այնուամենայնիվ, «մտային գրոհ» մեթոդի նպատակը սովորաբար նոր մտահաղացումների հավաքումն է (այս դեպքում՝ քնադատությունն ու դատողություններն նախընտրելի չեն), մինչդեռ DELPHI մեթոդով ձգտում են հասնել առավել բարդ վերլուծությունների՝ թիրախավորելով Ամփոփաթերթները և դարձնելով դրանք ավելի ճշգրիտ մի շարք քննարկման փուլերի միջոցով ⁵ :
Ֆոկուս խմբեր	Այս մեթոդը ենթադրում է սահմանափակ քանակությամբ հարցերի շուրջ կառուցված ազատ քննարկումներ խմբի անդամների միջև: Մոդերատորը սովորաբար ուղղորդում է խմբին օրակարգում դրված հարցերի շրջանակներում, բայց անդամների միջև փոխազդեցությունը նույնքան կարևոր է, որքան նրանց փորձը: Ֆոկուս խմբերը հաճախ օգտագործվում են տարբեր շահառուների ներկայացուցիչներին կամ տարբեր գիտության ոլորտների փորձագետներին դիմախոսելու համար: Մոդերատորը ամփոփում

⁵ DELPHI մեթոդի համար տես https://en.wikipedia.org/wiki/Delphi_method.

	<p>է քննարկումները և հայտարարում հիմնական եզրակացությունները:</p>
<p>Դեպքերի վերլուծություն</p>	<p>Այս մեթոդը օգտագործվում է այն ժամանակ, երբ քաղաքականության ազդեցության շրջանակները համեմատաբար նեղ են, կամ տվյալների հասանելիությունը սահմանափակ է: Երկրորդ դեպքում՝ դեպքի վերլուծությունը կարող է “reading-across”-ի հնարավորություն ընձեռել (այն է՝ վերլուծված մեկ դեպքի սահմանումները և եզրակացությունները կիրառել այլ, ավելի պակաս գործառնական փաստերով սցենարների համար): Դեպքերի ուսումնասիրությունները կարող են նաև թույլ տալ էքստրապոլացիայի և ընդհանրացումների իրականացում, բայց բոլոր այս դեպքերում կիրառված ենթադրությունները և տրամաբանական հիմնավորումները պետք է տեսանելի կերպով հայտարարվեն:</p>
<p>Ուժեղ (SWOT) վերլուծություն</p>	<p>Ուժեղ (SWOT) հապավումը բացվում է հետևյալ կերպ. Ուժ՝ ուժեղ կողմեր, Թ-Պ՝ թույլ կողմեր, Հ-Օ՝ հնարավորություններ, և Ս-Դ՝ սպառնալիքներ: Սա, երևի թե, ռազմավարական պլանավորման մեջ մտային գրոհի ամենատարածված գործիքներից է, որի ժամանակ բոլոր չորս գործոնները թվարկվում են մատրիցայի տեսքով:</p>
<p>Քանակական մեթոդներ</p>	<p>Նկարագրություն</p>
<p>Ուսումնասիրություններ</p>	<p>Դրանք համակարգված կերպով հավաքագրում են հիմնական տվյալները Ամփոփաթերթների օգտագործմամբ, որոնք կիրառվում են ներկայացուցչական, նախօրոք ընտրված անհատների ընտրության շրջանակներում: Դրանք սովորաբար հիմնվում են բաց և փակ հարցերով Ամփոփաթերթների վրա: Համակարգված և միօրինականացված մոտեցումը թույլ է տալիս օգտագործել վիճակագրական մոտեցումներ: Դրանք լայն կիրառություն ունեն՝ իրենց ճանաչված առավելությունների շնորհիվ:</p>
<p>Վիճակագրական տվյալներ</p>	<p>Ընդհանուր առմամբ՝ վիճակագրությունը վերաբերում է տվյալների հավաքագրմանը և մշակմանը, մեկնաբանմանը և ներկայացմանը: Նկարագրողական վիճակագրությունն օգտագործվում է տվյալների հավաքագրման ամփոփման և նկարագրման համար: Այն դիտարկում է գլխավոր տենդենցի չափումներ (միջին, մեդիան և եղանակ), դիսպերսիայի չափման միջոցներ (ստանդարտ շեղում և վարիացիա) և կապի չափման միջոցներ (կոռելացիա և ռեգրեսիա):</p> <p>Բացահայտողական վիճակագրությունը գործ ունի տվյալների օրինաչափությունների մոդելավորման հետ, որը վարկածները փորձարկելու համար օգտագործում է ընտրանքներ և պոպուլացիաներ:</p>

Խորհրդակցություն շահառուների հետ/ Հանրային քննարկումներ

1. Ինչու է դա կարևոր

Հանրային քննարկումները ԿԱԳ գործընթացի անբաժանելի մասն են և ֆունդամենտալ բաղադրիչը: Այն ուղղակիորեն արտացոլում է Կառավարության պետական կառավարման գործողությունների թափանցիկության, մասնակցության և օրինական սպասումների սկզբունքը:

Հանրային քննարկումների նպատակը կառավարության կողմից շահառուներին պարզապես տեղեկատվությամբ ապահովելը չէ (հաղորդել քաղաքականության որոշումը կամ պարզաբանել խնդիրը): Այն ավելի շուտ ենթադրում է երկխոսություն, քաղաքականության ձևավորման և իրականացման վրա ազդող կարծիքների և փաստարկների ներկայացում:

ԿԱԳ գործընթացը սերտորեն միահյուսված է խորհրդակցության հետ: Խորհրդակցությունը ձեր գիտելիքների բազան հարստացնելու, «արկղից դուրս մտածելու» և ձեր վարկածները ստուգելու միջոց է: Ահա թե ինչու են այս Ուղեցույցերն առանձին գլուխներով ներկայացնում խորհրդակցությունները:

Խորհրդակցության գործընթացն ընձեռում է հիանալի հնարավորություն ԿԱԳ-ի վերլուծաբաններին տեղեկատվություն հավաքագրելու համար, որը տիրապետում է «հանրությունը», այսինքն՝ ոչ պետական աղբյուրները: Մասնավորապես, խորհրդակցությունը իրականացնում է հետևյալ գործառույթները.

- կամրջում է կարգավորող և կարգավորվող կողմերի միջև առկա տեղեկատվական ճեղքը,
- լայնացնում և խորացնում է որոշումների կայացման գործառնական հիմքերը,
- բարձրացնում է թափանցիկությունը և հաշվետվողականությունը,
- նվազեցնում է կարգավորվածության, կարգավորման ձախողման և չնախատեսված հետևանքների ռիսկը,
- բարելավում է կիրառումը՝ վաղ փուլերում կանխելով այն, ինչը կարող է հանգեցնել կիրառման սխալ ընթացքի:

Վանդակ 19 – Հղում իրավական հիմքին

Ի նկատի ունեցեք, որ հանրային քննարկումները պարտադիր գործողություն են, որոնք Կառավարության կողմից որոշումների կայացման գործընթացի անբաժան մասն են կազմում, որի իրավական հիմքերն են՝

- «Իրավական ակտերի մասին» օրենքի 27.4 հոդված, և
- Խնդրում ենք լրացնել:

2. Ու՛մ հետ իրականացնել խորհրդակցություն

Պետք է բացահայտել այն հիմնական շահառուներին, որոնք պետք է ընդգրկվեն խորհրդակցության գործընթացում: Նպատակահարմար է ներգրավել հանրության լայն շրջանակներ: Նախատեսվում է, որ շահառուներին որոշելիս և հանդիպելիս պետք է հաշվի առնել երկու տարբեր, բայց հավասարապես կարևոր սկզբունքներ՝ (1) խորհրդակցությունը կարևոր է որոշումների կայացման գործընթացին հանրության մասնակցությունը ապահովելու համար, ուստի այն երբեք չպետք է շրջանցի որևէ մեկի իսկական շահը և (2), խորհրդակցությունը պետք է ծառայի ձեր նպատակին, այսինքն՝ ստուգի և ամրապնդի ձեր ԿԱԳ նախագիծը:

Բացի այդ, պետք է նաև մտածել սեփական կարիքների մասին.

- Լավ իրականացված խորհրդակցական գործընթացը բացահայտում է զգալի շահերով, լավ տեղեկացված և քաղաքականության իրականացման գործընթացում դեր ունեցող շահառուների կարծիքները:
- Վատ իրականացված խորհրդակցական գործընթացը հնարավորություն է ընձեռում կապ հաստատել միայն իշխող, իշխանություն ունեցող կամ լավ կապեր ունեցող շահառուների հետ:

Ընդհանուր առմամբ, շահառուներ են հանդիսանում.

- այն անհատները, խմբերը կամ կազմակերպությունները, որոնց շահերը ենթարկվում են դիտարկվող խնդրի ազդեցությանը կամ ում գործողություններն էապես ազդում են այդ խնդրի վրա: Շահառուների մեջ կարող են ներառված լինել նաև հանրային կառավարման այլ մարմիններից ներկայացուցիչներ և երրորդ երկրներից անձիք,
- նրանք, ովքեր տիրապետում են ազդեցության գնահատման, ռազմավարության ձևակերպման և քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության, ռեսուրսների և փորձի, և
- նրանք, ովքեր վերահսկում են քաղաքականության իրականացման համապատասխան գործիքները:

Վանդակ 20 – խորհրդակցական մատրիցայի պատրաստում

Խորհրդակցական մատրիցան շահառուների և ձեր կողմից դիտարկվող խնդրի կամ հարցի վերաբերյալ նրանց դիրքորոշումների ամբողջական ցուցակ է: Այն պետք է ցուցադրի.

- բացահայտված քաղաքականության խնդրին առընչվող տարբեր շահառուների շահերը,
- նրանց տիրապետության տակ եղած ռեսուրսները, մասնավորապես, այն ինչ կարող է ընդգրկվել կոնկրետ հարցի շուրջ բանավեճի շրջանակներում,
- ռեսուրսների մոբիլիզացման նրանց կարողունակությունը,
- վտանգի տակ գտնվող քաղաքականության առնչությամբ պաշտոնական/ հանրային դիրքորոշումը:

Մատրիցան կարող է ունենալ հետևյալ տեսքը՝			
Շահառու	Շահ/ առաքելություն/ ներկայացուցչականություն	Կարծիք/դիրքորոշում	Ռեսուրսները մոբիլիզացնելու կարողություն
Ա շահառու			
Բ շահառու			
....			

3. Ե՞րբ իրականացնել խորհրդակցություն: Ինչի՞ վերաբերյալ:

Ոչ բոլոր դեպքում է, որ անհրաժեշտ է լինում ակտիվորեն խորհրդակցել հանրության հետ: Ձեր խորհրդակցելու հնարավորությունը և աստիճանը կախված է նրանից, թե տվյալ քաղաքականության նախաձեռնությունը որ փուլում է գտնվում, ինչպես նաև այդ նախաձեռնության տեսակից: Նմանապես հանրային քննարկումների ձևերը կարող են/պետք է տարբեր լինել՝ կախված ձեր պահանջներից:

Ընդհանուր առմամբ, պետք է պլանավորել հանրային քննարկումներ/խորհրդակցություն այն ժամանակ, երբ պատրաստ եք տեղադրել բավարար տեղեկատվություն հանրային հատվածում արդյունավետ և տեղեկացված երկխոսություն ապահովելու համար, սակայն չպետք է սպասել՝ մինչ ամեն ինչ արդեն լուծված լինի (խորհրդակցական գործընթացն անպարոպ կլինի): Խորհրդակցությունը պետք է տեղի ունենա այնքան շուտ, որքան հնարավոր է ըստ նախագծի պլանի, քանի դեռ այս գործոնները թույլ են տալիս:

Դուք կարող եք որոշել՝ կենտրոնացնել խորհրդակցական ցիկլը, ըստ էության, ԿԱԳ վերլուծության բոլոր ասպեկտների վրա՝ բոլոր կամ միայն որոշակի քայլեր ընդգրկող: Թե ինչպես պատրաստել ԿԱԳ փաստաթուղթը, որոշում եք դուք, սակայն կարող եք նաև հավասարակշռություն հաստատել տիպային ընդհանրական հարցերի և ավելի անհատական հարցումների միջև:

Կարևոր է հնարավորինս հստակեցնել, թե ինչի եք ուզում հասնել խորհրդակցության գործընթացի արդյունքում, քանզի դա հաճախ թելադրում է խորհրդակցության տևողությունը և ձևը: Խորհրդակցությունը կարող է նպաստել նոր մտահղացումների առաջացմանը, խնդրի առավել հստակեցմանը, վստահելի փաստացի տվյալների հավաքագրմանը, ինչպես նաև կատարելագործել և ստուգել ձեր գիտելիքները:

Ստորև ներկայացված են հարցերի հնարավոր տարբերակներ.

- **ԽՆԴԻԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ:** -Արդյո՞ք խնդիրը ճիշտ է ձևակերպված և ընկալված: Եթե ոչ, ապա ինչու՞:
 - Արդյո՞ք ելակետային տարբերակը խելամտորեն նախագծված է և համահունչ է ժամանակի առումով: Եթե ոչ, ապա ինչու՞:
- **ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ:** - Արդյո՞ք իրականացման նպատակները համապատասխան են Հայաստանի համար: Եթե ոչ, ապա ինչու՞:

- **ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ:** - Արդյո՞ք առաջարկված տարբերակները իրատեսական են և խելամիտ: Եթե ոչ, ապա ինչու՞:
- Արդյո՞ք պետք է, որ այլ ծախսեր էլ դիտարկվեն: Որո՞նք: Ինչու՞:
- **ԾԽՍԵՐ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐ:** - Արդյո՞ք ԿԱԳ-ը բովանդակում է տարբերակների բոլոր կարևոր ծախսերը և օգուտները:
- Ի՞նչ այլ ծախսեր և օգուտներ պետք է դիտարկվեն:
- Խնդրում ենք տվյալները ներկայացնել այնպես, որպեսզի դրանք առավել ճշգրիտ լինեն ծախսերի և օգուտների մեծությունը հասկանալու ու տարբերակները համադրելու համար
- **ԱՅԼ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ:-** Արդյո՞ք պետք է, որ այլ ազդեցություններ ևս, ինչպիսիք են՝ տարածական ազդեցությունները, ընդգրկվեն վերլուծությունում:

Մշտապես խնդրեք շահառուներին տրամադրել իրենց տվյալները և հիմնավորել դրանք:

4. Խորհրդակցության արդյունքների օգտագործում

Դուք պատասխանատու եք ստացված արդյունքների արդյունավետ և օբյեկտիվ օգտագործման համար: Սա ոչ միշտ է այնքան հեշտ, ինչպես կարող է թվալ: Խորհրդակցություն իրականացնելիս և դրա արդյունքում ստացված տեղեկատվությունն օգտագործելիս պետք է գիտակցել մի շարք վտանգավոր ծուղակների առկայության մասին, որոնք կարող են կողմնակալություն մտցնել արդյունքների մեջ: Մասնավորապես.

- **ՏԱՐԲԵՐԱԿԵԼ ՓԱՍՏԵՐԸ ԿԱՐԾԻՔՆԵՐԻՑ:** Տվյալների հավաքագրման համար խորհրդակցություն օգտագործելիս պետք է հանգամանորեն ստուգել, որ օգտագործված մեթոդը ճիշտ է և պատշաճ, ու փորձել հաստատել արդյունքների հուսալիությունը: «Peer-reviewing»-ը, այլ ուսումնասիրությունների հետ համեմատական և զգայունության վերլուծությունները կարող են էականորեն բարձրացնել տվյալների որակը: Պետք է ուսումնասիրել վտանգի տակ գտնվող հարցի հետ կապված շահառու խմբերի դիրքերին առնչվող ռիսկերը և հետևանքները:
- **ԿՇՌԵԼ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ:** Ոչ բոլոր շահառու խմբերն են հավասարապես ի վիճակի մասնակցել խորհրդակցություններին կամ արտահայտել իրենց կարծիքը միևնույն հարթության վրա: Ուստի կարող է անհրաժեշտություն լինել հատուկ ջանքեր գործադրել, որպեսզի ապահովվի բոլոր համապատասխան շահառուների տեղեկացվածությունը և խորհրդակցությանը ներդրում ունենալու կարողությունը: Պետք է նաև զգույշ լինել եզրահանգումներ անելու հարցում, եթե առկա են շատ քիչ թվով արձագանքներ և դրանք բխում են շատ նեղ շահերի շրջանակներից: Միևնույն ժամանակ, պետք է յուրաքանչյուր արձագանքին տալ իր համապատասխան կշիռը, եթե այն ներկայացնում է մեծ թվով քաղաքացիների կամ շահառուների:

5. Խորհրդակցական գործընթացի զեկուցում

Համոզված եղեք, որ առնվազն հետևյալն ընդգրկված է.

- շահառուների և փորձագետների հետ խորհրդակցությունը տեղի է ունեցել,

- ընտրված խորհրդակցական ձևի կիրառման հիմնավորում (հատկապես, եթե այն նախատեսված է որոշակի շահառուների կամ փորձագետների թիրախավորման համար) և
- ստացված մեկնաբանությունների հիմնական գրոհի սխեմատիկ, բայց համակողմանի ամփոփում՝ հատկապես տրված հարցերին առնչվողների: Դա իրականացնելիս.
 - պետք է հաշվի առնել բոլոր ստացված արդյունքները,
 - պետք է տարբերակել ընդգծված փաստարկները՝ առանց այդ դիքորոշման աղբյուրի նշման անհրաժեշտության (այնուամենայնիվ, պետք է արձանագրել, թե որ շահառուն կամ փորձագետն ինչ են խորհուրդ տվել),
 - ամենակարևորը պետք է հստակեցնել, թե որ արդյունքներն են որոշվել պահել և որոնք անտեսել. ամեն անգամ բացատրել, թե ինչու:

Հուշում. Եվրոպական հանձնաժողովի ուղեցույցերը տրամադրում են սպառիչ ուղղորդում, թե ինչպես իրականացնել շահառուների հետ խորհրդակցություն:
Տես http://ec.europa.eu/smart-regulation/guidelines/ug_chap7_en.htm, և http://ec.europa.eu/smart-regulation/guidelines/tool_50_en.htm (անգլերենով).

ՀԱՎԵԼՎԱԾ – ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ (հղում կատարել ԲԱԺԻՆ 6-ԻՆ)

Այս հավելվածում ներկայացված է տարբերակների համեմատման, ԿԱԳ վերլուծությունում օգտագործվող առավել տարածված մեթոդներից երեքը:

Ծախս-օգուտ վերլուծություն

1. Ի՞նչ է դա, և ե՞րբ այն օգտագործել

Սկզբունքայնորեն, պետք է միշտ փորձել կիրառել Ծախս-օգուտ վերլուծությունը (ԾՕՎ): ԾՕՎ-ն ստացվում է ընդհանուր օգուտների և ընդհանուր ծախսերի տարբերությունից՝

**Օգուտներ – Ծախսեր («զուտ եկամտաբերության տոկոսը) կամ
Օգուտներ / ծախսեր («օգուտների հարաբերակցությունը ծախսերի նկատմամբ»)**

Առավելություններ – ԾՕՎ-ն շատ արժեքավոր մեթոդ է, քանի որ այն հաշվի է առնում քաղաքականության միջոցառումների բոլոր (բացասական և դրական) ազդեցությունները և թույլ է տալիս հստակորեն դասակարգել տարբերակները՝ ստացված զուտ սոցիալական հասույթից (կամ կորստից կախված): Ուստի, ԾՕՎ-ն բավականին սպառիչ է և ամենայն հավանականությամբ շատ օգտակար կլինի ԿԱԳ-ի շրջանակում բաց սցենարներ և փոխզիջումնային տարբերակներ կառուցելիս:

Թերություններ – Այս մեթոդն ունի նաև թերի կողմեր: Այն կարող է կիրառվել միայն այն ազդեցությունները գնահատելիս, որոնք հնարավոր է արտահայտել քանակական ձևով և գնահատել միևնույն չափման համակարգով (դրա կիրառման լավագույն տարբերակը՝ դրամականացված արժեքներն են, որոնք, ինչպես տեսանք, երբեմն կարող են դժվարությամբ ստացվել): Բաշխողական հարցերը ներառելու համար այն անհրաժեշտ է համալրել լրացուցիչ վերլուծություններով:

2. Ինչպես օգտագործել

ԾՕՎ գործընթացը ընթանում է հետևյալ քայլերով.

- Վերլուծել շահառուների տեսակները և ոլորտները, որոնք ենթակա են առանձին տարբերակի կամ քաղաքականությունների խառնուրդի ազդեցությանը,
- Տալ ազդեցության ենթարկվածների թիվը՝ քանի՞ կազմակերպություն, ճյուղ, հիվանդ և այլն,
- Ճշտել գործող անձանց յուրաքանչյուր դասի համար ծախսերը և օգուտները,
- Կատարել ծախսերի և օգուտների քանակականացում/ դրամական արժեվորում,
- Ճշտել ծախսերի և օգուտների գծով դրամական հոսքերը՝ արտահայտված ժամանակում, կիրառել դիսկոնտավորում և հաշվարկել առանձին տարբերակների զուտ ներկա արժեքը,

- Կատարել բոլոր ակնկալվող օգուտների և ծախսերի գումարում ու զուտ օգուտների հաշվարկում (= քաղաքականության տարբերակի արժեքը՝ ըստ ծախս-օգուտ մեթոդի), և
- Հաշվի առնել սխալների կամ անորոշությունների շեղման սահմանները:

ԾՕՎ-ի լրիվ գործընթացը կարող է լինել բավականին ժամանակատար: Այս գործընթացը պետք է իրականացնել համաչափ եղանակով՝ կախված ժամկետներից, ռեսուրսներից և տվյալների հասանելիությունից: Այնուամենայնիվ, պետք է միշտ նշել, թե որտեղ եք ենթադրություններ արել, և ինչ են իրենցից ներկայացնում դրանք, ու բացատրել, թե ինչով է պայմանավորված ԾՕՎ-ի ամբողջական գործընթացից շեղումը:

Վանդակ Ա.1- Ճանապարհային խցանումների օրինակում՝ ծախս-օգուտ վերլուծության մեթոդով կատարված քանակական գնահատումը

Ճանապարհային խցանման մեր օրինակում բացահայտված են քաղաքականության հինգ առանձին տարբերակներ, որոնք ներկայացված են Աղյուսակ Ա.1-ի առաջին տողում: Լավ ըմբռնման համար այստեղ կդիտարկենք ազդեցության ենթարկված շահառուների միայն երկու խմբեր, մի կողմից՝ քաղաքապետարանը, և մյուս կողմից՝ քաղաքացիները:

Առնչվող ԾՕՎ-ն ենթադրում է հետևյալ քայլերի իրականացում .

- գործող անձանց յուրաքանչյուր դասի համար ծախսերի և օգուտների բացահայտում և ճշտում (այդ ծախսերը և օգուտները ներկայացված են ներքոնշյալ աղյուսակի առաջին սյունակում),
- վերլուծությունների տևողության սահմանում (որպես ընդհանուր կանոն՝ վերլուծության տևողությունը սովորաբար պետք է լինի կատարված առաջարկի կամ ներդրված ակտիվի կյանքի տևողության չափը, սակայն, երբ հնարավոր չէ մինչև վերջ բացահայտել ակտիվի կյանքի տևողությունը, խորհուրդ է տրվում վերցնել վերլուծության տևողությունը՝ 10 տարի),
- բոլոր ծախսերի և օգուտների քանակականացում և դրամական արժեվորում, ինչպես նաև այս թվերի ստացման համար օգտագործված ենթադրությունների բացատրություն (ինչպես ցույց է տրված ճանապարհային խցանման օրինակի հղումներում: Մեր օրինակում միայն կյանքի կորուստները չեն դրամականացվել, մնացած ցուցանիշներն արտահայտվել են դրամական արժեքներով) և
- վերջապես, բոլոր սպասվող օգուտների և ծախսերի գումարում ու զուտ օգուտների հաշվարկում (= քաղաքականության տարբերակի արժեքը՝ ըստ ծախս-օգուտ վերլուծության):

Հիմնվելով մեր հիփոթեթիկ օրինակի վրա՝ քաղաքականության բոլոր առաջարկները համարվում են արժեքավոր, քանզի նրանց օգուտները փաստացիորեն գերազանցում են ծախսերը: Այնուամենայնիվ, երբ տարբերակները համեմատվում են իրենց ծախսերով և օգուտներով, Տարբերակ 4-ն ունենում է ամենամեծ զուտ օգուտը (ընդհանուր օգուտների և ընդհանուր ծախսերի միջև տարբերությունը)՝ փրկված կյանքերի և հաշվարկված օգուտների տեսանկյունից, ուստի և այն պետք է լինի երաշխավորված քաղաքականությունը, որին պետք է հետևել:

Աղյուսակ Ա.1 – Ճանապարհային խցանումների օրինակ/ ԾՕՎ-ի կիրառմամբ քանակական գնահատում

	Տարբերակ 1 Ոչ մի գործողություն	Տարբերակ 2 Քաղաքի կենտրոնից դուրս անվճար կայանատեղի ների կառուցում	Տարբերակ 3 Հանրային տրանսպորտի գրավչության և հասանելիության բարձրացում	Տարբերակ 4 Ավտոբուսի սակագնի նվազեցում	Տարբերակ 5 Անհատական տրանսպորտային միջոցների կայանման գնի/հարկի բարձրացում
Արդյունավետություն		50%	30%	30%	50%
Քաղաքապետարանի ծախս	0	4,500 միլիոն ⁶	5,000 միլիոն ⁷	250 միլիոն ⁸	0
Քաղաքացիների ծախս					
# Վթարներ (<Դ)	900 (72 միլիոն) ⁹	450 (36 միլիոն)	630 (50.4 միլիոն)	630 (50.4 միլիոն)	450 (36 միլիոն)
Կյանքի կորստի դեպքեր	90 ¹⁰	45	63	63	45
Ճանապարհային խցանման մեջ կորցրած ժամանակ (<Դ)	375,000 միլիոն ¹¹	187,500 միլիոն	262,500 միլիոն	262,500 միլիոն	187,500 միլիոն
Տրանսպորտային միջոցի գործարկման ծախսեր	37,500 միլիոն ¹²	18, 750	26,250 միլիոն	26,250	18,750 միլիոն

⁶ Ենթադրվում է, որ քաղաքի կենտրոնից դուրս երկու կայանատեղիի կառուցումը կարժենա 4.5 միլիարդ ՀՀ (10 տարվա ընթացքում):

⁷ Ենթադրվում է, որ նոր ավտոբուսներ գնելու և նոր գծեր բացելու վրա 10 տարվա արժեքը կկազմի 750 միլիոն ՀՀ:

⁸ Եթե ավտոբուսի մեկ տոմսի համար գեղչը 10 ՀՀ է, և յուրաքանչյուր աշխատանքային օր 10,000 մարդ օգտվում է ավտոբուսով երթևեկելու ծառայությունից, ապա հաջորդող 10 տարվա համար կորցրած եկամուտը (քաղաքապետարանի ծախսը) կլինի $10 \times 10,000 \times 250 \times 10 = 37$:

⁹ Ենթադրվում է, որ յուրաքանչյուր վթար միջինում պատճառում է 80,000 ՀՀ-ի նյութական ծախս:

¹⁰ 10 տարվա գնահատմամբ:

¹¹ Ենթադրվում է, որ յուրաքանչյուր անձ կորցնում է 1.5 ժամ ճանապարհային խցանումների մեջ: Եթե ենթադրում ենք, որ յուրաքանչյուր աշխատանքային օր շուրջ 100,000 մարդ հայտնվում է ճանապարհային խցանման մեջ՝ 1000 ՀՀ աշխատավարձի ժամային դրույքաչափով, ապա $1.5 \times 100,000 \times 1000 \times 250$ աշխատանքային օր $\times 10$ տարի = 375 միլիարդ ՀՀ:

(ՀԴ)		միլիոն		միլիոն	
Վթարներով (և օդի աղտոտմամբ) պայմանավորված առողջապահական ծախսեր (ՀԴ)	36 միլիոն ¹³ (12.8 միլիոն) ¹⁴	18 միլիոն (6.4 միլիոն)	25.2 միլիոն (9 միլիոն)	25.2 միլիոն (9 միլիոն)	18 միլիոն (6.4 միլիոն)
Տրանսպորտային միջոցների կայանում (ՀԴ)	0	0	0	0	10,000 միլիոն
Ընդհանուր ծախս (ՀԴ)	90 կյանքի կորստի դեպք (412.62 միլիարդ)	45 կյանքի կորստի դեպք (210.81 միլիարդ)	63 կյանքի կորստի դեպք (293.83 միլիարդ)	63 կյանքի կորստի դեպք (289.08 միլիարդ)	45 կյանքի կորստի դեպք (216.31 միլիարդ)

	Տարբերակ 1 Ոչ մի գործողություն	Տարբերակ 2 Քաղաքի կենտրոնից դուրս անվճար կայանատեղիների կառուցում	Տարբերակ 3 Հանրային տրանսպորտի գրավչության և հասանելիության բարձրացում	Տարբերակ 4 Ավտոբուսի սակագնի նվազեցում	Տարբերակ 5 Անհատական տրանսպորտային միջոցների կայանման գնի/հարկի բարձրացում
Քաղաքապետարանի օգուտներ (ՀԴ)	0	0	0	0	10,000 միլիոն ¹⁵

¹² Ենթադրվում է, որ պայմանավորված յուրաքանչյուր օրվա ճանապարհային խցանումներով, յուրաքանչյուր տրանսպորտային միջող կառաչացնի 1000 ՀԴ լրացուցիչ ծախս (ավելի շատ վառելիքիսպառման, արգելակի օգտագործման և այլնի պատճառով): Եթե յուրաքանչյուր օր նման ազդեցության է ենթարկվում 15,000 տրանսպորտային միջոց, ապա 15,000*1000*250*10 տարի = 37.5 միլիարդ ՀԴ:

¹³ Ենթադրվում է, որ յուրաքանչյուր վթար միջինում պատճառում է 40,000 ՀԴ-ի առողջական ծախս:

¹⁴ Ենթադրվում է, որ տարեկան 800 խիստ բժշկական միջամտություն պահանջող այց կլինի հիվանդանոց՝ միջինում 16,000 ՀԴ արժողությամբ ծախսով:

Քաղաքացիների օգուտներ (ՀԴ)	0	0	0	250 միլիոն¹⁶	0
Զուտ օգուտներ (ՀԴ)	-90 կյանք (-412.62 միլիարդ)	+45 կյանք (+201.81 միլիարդ)	+27 կյանք (+109.79 միլիարդ)	+27 կյանք (+123.54 միլիարդ)	+45 կյանք (+206.31)

¹⁵ Օրական 400 ՀԴ հարկը կայանման համար հանդիսանում է եկամուտ քաղաքապետարանի համար:

¹⁶ 10 ՀՂավտորուսի սակագնի զեղչը հանդիսանում է օգուտ (նվազեցված ծախս) քաղաքացիների համար:

Ծախս-արդյունավետություն վերլուծություն

1. Ինչ է դա, և երբ օգտագործել այն

Ծախս-արդյունավետություն վերլուծությունը (ԾԱՎ), ի տարբերություն նախորդի, ավելի պարզ է գործում: Այն հետապնդում է շատ որոշակի պահանջ, ինչպիսին է՝ քաղաքականության տրված նպատակի կամ թիրախի, կամ արտաքին սահմանափակումների (ինչպիսին է, օրինակ, բյուջեի սահմանափակումը) պայմաններում առավելագույնի հասցնել քաղաքականության տարբերակի արդյունավետությունը: ԾԱՎ-ն տրվում է հետևյալ բանաձևով՝

Ծախս / Էֆֆեկտիվություն

ԾԱՎ-ն կապում է միջամտության արդյունավետությունը դրա ստացման ընդհանուր ծախսերի հետ: Դատողությունների համար սովորաբար չափանիշ է հանդիսանում ստացված արդյունքի յուրաքանչյուր միավոր ծախսը (օրինակ՝ յուրաքանչյուր աշխատատեղի ստեղծման ծախսը կամ յուրաքանչյուր քաղճառայողի վերապատրաստման ծախսը): Այս միավորի ծախսն այնուհետև համեմատվում է միևնույն արդյունքն ապահովող այլ տարբերակների հետ: Արդյոք քաղաքականության առաջարկը ծախս խնայող է, թե ոչ, կախված է նրանից, թե արդյոք այն գերազանցում է այլ մրցակից առաջարկություններին տրված նպատակին ավելի քիչ ծախսերով հասնելու հարցում:

Առավելություններ – ԾԱՎ-ն չի պահանջում օգուտների ճշգրիտ չափում կամ գնահատում: Այն կարող է օգտակար լինել հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ առողջապահություն, կրթություն, անվտանգություն կամ բնապահպանություն, որտեղ հնարավոր է բացահատել ազդեցությունները արտահայտող արժեքներ, բայց անհրաժեշտություն չկա դրանք արտահատել դրամական արժեքներով: ԾԱՎ-ն թույլ է տալիս նաև արագ ամփոփել առաջարկված տարբերակները՝ սահմանափակ (կամ հաստատուն) բյուջեի պայմաններում:

Թերություններ – ԾԱՎ-ն ունի իր բացասական կողմերը: Նախ, այն չի լուծում օգուտների նվազագույն կամ օպտիմալ մակարդակի խնդիրը: Երկրորդ, այն հակված է անտեսել հնարավոր կողմնակի հետևանքները, քանի որ այն կենտրոնացած է մի տեսակի օգուտի վրա (քաղաքականության նախատեսված նպատակը): Երրորդ, այն չի ապահովում հստակ արդյունքներ, ասենք՝ արդյոք կարգավորիչ առաջարկը հասարակության համար կընձեռի շոշափելի զուտ օգուտներ:

ԾԱՎ-ն պետք է իրականացնել հետևյալ **քայլերի** միջոցով՝

1. ներկայացնել առաջարկված տարբերակի ծախսերի ընդլայնված գնահատում,
2. ցույց տալ, որ նպատակներն արդարացնում են ծախսերը (հիշելով, որ վերջին հաշվով սա քաղաքական դատողություն է),
3. ուսումնասիրել՝ արդյոք հնարավոր է ստանալ նույն արդյունքները ավելի քիչ ծախսերով՝ օգտագործելով այլ մոտեցում կամ այլ գործիքներ, կամ արդյոք ավելի շատ կամ ավելի լավ արդյունքներ կարող էին ստացվել այդ նույն ծախսերով՝ օգտագործելով այլ մոտեցում կամ այլ գործիքներ,

4. առաջարկել ամենաշատ/ամենաքիչ ծախսատար տարբերակը:

Վանդակ Ա.2- Ճանապարհային խցանումների օրինակում/ ԾԱՎ-ի կիրառմամբ գնահատումը

Այն դեպքերում, երբ հնարավոր չէ օգուտներն արտահատել դրամական ձևով և, ըստ այդմ, օգտագործել ԾՕՎ-ն, Ծախս-արդյունավետություն վերլուծությունը կարող է լինել հավասարապես օգտակար: ԾԱՎ-ը որոշում է, թե քաղաքականության նպատակին հասնելու հնարավոր եղանակներից ո՞րն է առավել քիչ ծախսատարը:

Ի նկատի ունեցեք, որ ԾԱՎ-ն չի պատասխանում այն հարցին, թե արդյոք կարգավորումը կամ քաղաքականությունը պարտադիր է կիրառել ընդհանրապես (այն դեպքում, երբ առաջարկված քաղաքականության ծախսերը գերազանցում են օգուտները, կամ ծախսերի մակարդակը չի հիմնավորվում կառավարող մարմնի կողմից): Այն ավելի շուտ օգնում է բացահայտել ամենաարդյունավետ տարբերակը, պայմանով, որ տվյալ քաղաքականության նախաձեռնության գործողությունը կամ կարգավորումը համաձայնեցվում է և որպես առանցքային ուղենիշ ընտրվում է օգուտը: Սա նշանակում է, որ ԾԱՎ-ը կարող է օգտագործվել միայն տվյալ քաղաքականության նախաձեռնության գործողության իրականացման պատշաճության վերաբերյալ հստակ որոշում կայացնելուց հետո:

Մեր օրինակում պարզության համար դիտարկվում են միայն հանրային ծախսերը: Առկա է քաղաքապետարանի համար ուղղակի ծախս ներկայացնող երեք տարբերակ (Տարբերակներ 2, 3 և 4), մինչդեռ Տարբերակ 5-ը ծախսեր չի առաջացնում: Աղյուսակ Ա.2-ը ներկայացնում է իրավիճակը:

Եթե մենք որպես ուղենիշ դիտարկում ենք փրկված կյանքերը, ապա Տարբերակ 5-ը տալիս է ամենաարդյունավետ (ծախս խնայող) տարբերակը՝ Տարբերակ 4-ից հետո:

Աղյուսակ Ա.2 – Ճանապարհային խցանումների օրինակ՝ ԾԱՎ-ի կիրառմամբ գնահատում

	Տարբերակ 2 Քաղաքի կենտրոնից դուրս անվճար կայանատեղիների կառուցում	Տարբերակ 3 Հանրային տրանսպորտի գրավչության և հասանելիության բարձրացում	Տարբերակ 4 Ավտոբուսի սակագնի նվազեցում	Տարբերակ 5 Անհատական տրանսպորտային միջոցների կայանման գնի/հարկի բարձրացում
Քաղաքապետ արանի ծախս (ՀԴ)	4,500 միլիոն	5,000 միլիոն	250 միլիոն	0
Փրկված կյանքեր	45	27	27	45

Ծախս- արդյունավետ ություն (մեկ կյանքի փրկման համար անհրաժեշտ ծախս, ՀԴ)	100 միլիոն	185.19 միլիոն	9.26 միլիոն	0
--	-------------------	----------------------	--------------------	----------

ԾՕՎ-ի և ԾԱՎ-ի միջև ընտրություն

Ստորև ներկայացված աղյուսակը ցուցադրում է երկու առավել հաճախ օգտագործվող մեթոդաբանություններում՝ ԾՕՎ-ում և ԾԱՎ-ում, օգտագործվող երկու չափանիշ (քաղաքականության նպատակը և տվյալների միջավայրը համապատասխանաբար): Աղյուսակն առաջարկում է, թե երկուսից որն օգտագործել՝ փաստացի տրված պայմաններում:

Աղյուսակ Ա.3 – Արդյո՞ք օգտագործել ԾՕՎ, թե՛ ԾԱՎ

Մեթոդաբանություն	Քաղաքականության նպատակ	Տվյալների միջավայր
Ծախս -օգուտ վերլուծություն	<ul style="list-style-type: none"> • անորոշ • լայնորեն սահմանված • հնարավոր սցենարները դեռ բացահայտված չեն 	<ul style="list-style-type: none"> • և՛ ծախսերը, և՛ օգուտները քանակականացված են • փոխզիջումներ
Ծախս – արդյունավետություն վերլուծություն	<ul style="list-style-type: none"> • Ֆիքսված (օրինակ, հաստատված է համաձայն իրավական պահանջների, բյուջետային սահմանափակումների) 	<ul style="list-style-type: none"> • օգուտները դժվար է հաշվել • օգուտներն արժեքավոր չեն

Բազմաչափանիշ վերլուծություն

1. Ի՞նչ է դա, և ե՞րբ օգտագործել այն

Բազմաչափանիշ վերլուծությունը (ԲՉՎ) հիմնվում է կատարողականի կամ վարձահատուցումների մատրիցայի վրա, որում տարբերակների կատարումները համադրվում են տարբեր կշռված չափանիշների հետ: ԲՉՎ-ն կարող է լինել արդյունավետ մոտեցում, քանի որ այն թույլ է տալիս կիրառել ծախս-օգուտ մտածելակերպն այն դեպքերում, երբ առկա է որակական, քանակական և դրամական տվյալների խառնուրդ հանդիսացող ազդեցությունների ներկայացման անհրաժեշտություն, և երբ առկա է որոշակիության փոփոխվող աստիճաններ:

2. Ինչպե՞ս այն օգտագործել

ԲՉՎ-ն իրականացվում է հետևյալ քայլերի միջոցով.

1. Այսպես ասած՝ առաջնահերթ չափանիշների սահմանում և նրանց կարևորության կշռում, քանզի ոչ բոլոր չափանիշներն են հավասարապես կարևոր. նրանցից մի քանիսն ավելի էական են կամ հրատապ, քան մնացածը՝ կախված հանրային արժեհամակարգից և տեղի շահառուների սպասումներից և ազգային կամ տարածաշրջանային ռազմավարություններից,
2. ցանկալի է չափանիշների ընտրությունը և կշռումը քննարկել շահառուների և կառավարության կամ այլ փորձագետների հետ, օրինակ՝ ֆոկուս խմբերի միջոցով,
3. յուրաքանչյուր տարբերակի գնահատում յուրաքանչյուր չափանիշի համապատասխան (կամ դրա վրա ազդեցության), և

Ընդհանուր ազդեցության հաշվարկում (արդյունավետություն \times կշիռ) և տարբերակների համեմատում:

Վանդակ Ա.3 – Առաջնահերթությունների սահմանման գործընթացում օբյեկտիվության և թափանցիկության ապահովում

Պետք է գիտակցել, որ առաջնահերթությունների սահմանումը բարդ և հակասական գործընթաց է: Քաղաքացիները հակված են տեսնելու տարբեր առաջնահերթությունները՝ կախված խնդրի շրջանակներում ազդեցության ենթարկման աստիճանից: Փորձագետները ևս կողմնապահություն կարող են անել՝ ելնելով մասնագիտական ոլորտից: Ավելին, ջատագովությունը հաճախ գտնում է իր ճանապարհը և ազդում է առաջնահերթությունների ընտրության վրա: Տնտեսական և քաղաքական շահերից բխող թաքնված գործողությունների ծրագիրը ևս կարող է ազդել առաջնահերթությունների ընտրության վրա:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առաջնահերթությունների սահմանման գործընթացի օրինականությունը խիստ կախված է չափանիշների ընտրության և կշռման ընկալումից: Առաջնահերթությունների ներքին սահմանումը կարող է լինել հնչեղ և օբյեկտիվ, բայց այն կարող է չարտացոլել կառավարության քաղաքականության առաջնահերթությունները

կամ չառաջացնել անհրաժեշտ մասնակցային զգացողություն արտաքին դերակատարների մոտ, որոնք արժեքների հիմնավորման առանցքային բաղադրիչներ են:

Ուստի, անհրաժեշտ է հիմնել բազմաոլորտային խմբեր/անհատական կողմնապահությունները բացառելու համար: Ավելի հեշտ է ունենալ փորձագետների անկախ խումբ, քան անկախ փորձագետների խումբ:

Վանդակ Ա.4 – Ճանապարհային խցանումների օրինակում ԲԶՎ որակական գնահատումը

Ճանապարհային խցանումների մեր օրինակում առկա է չորս տարբերակ և միաժամանակ դիտարկելու համար նույնականացված են չորս տարբեր չափանիշներ՝.

- առաջինը վերաբերվում է տարբերակների արդյունավետությանը (այսպիսով՝ ավելի բարձրարժեք տարբերակները նպատակի հասնելու տեսանկյունից ավելի արդյունավետ են),
- երկրորդը վերաբերվում է քաղաքապետարանի ծախսերին (այսպիսով՝ ավելի բարձրարժեք տարբերակները քիչ ծախսատար են քաղաքապետարանի համար),
- երրորդ չափանիշը վերաբերվում է քաղաքացիների ծախսերին (այսպիսով՝ ավելի բարձրարժեք տարբերակները քիչ ծախսատար են քաղաքացիների համար), և
- չորրորդ չափանիշը վերաբերվում է քաղաքացիների այլ օգուտներին (այսպիսով՝ ավելի բարձրարժեք տարբերակները քաղաքացիների համար լրացուցիչ օգուտներ են ապահովում):

Այս չափանիշներն այնուհետև կշռվում են քաղաքապետարանի համար իրենց հարաբերական կարևորության տեսանկյունից, այն է՝ քաղաքապետարանի համար ամենակարևոր չափանիշները, մեր օրինակում արդյունավետությունը և ծախսը, ավելի մեծ կշիռ են ստանում:

Ստորև Աղյուսակ Ա.4-ը ցույց է տալիս հնարավոր գնահատման միավորները: Արդյունքում լավագույն տարբերակը Տարբերակ 5-ն է, որի արդյունքում հանրային կայանատեղիների գնի բարձրացման և անհատական կայանատեղիների համար լրացուցիչ հարկի ներդրմամբ՝ ավելացան նաև անհատական տրանսպորտային միջոցների համար կայանման ընդանուր ծախսերը:

Աղյուսակ Ա.4 – Ճանապարհային խցանումների օրինակ. որակական գնահատում՝ ըստ ԲԶՎ-ի

Չափանիշ	Կշիռ	Տարբերակ 2 Քաղաքի կենտրոնից դուրս անվճար կայանատեղիների կառուցում	Տարբերակ 3 Հանրային տրանսպորտի գրավչության և հասանելիության	Տարբերակ 4 Ավտոբուսի սակագնի նվազեցում	Տարբերակ 5 Անհատական տրանսպորտային միջոցների կայանման գնի/հարկի բարձրացում
---------	------	--	--	---	---

			բարձրացում		
Արդյունավետություն	5	5 (25)	2 (10)	2 (10)	3 (15)
Քաղաքապետարանի ծախս	5	1 (5)	2 (10)	2 (10)	5 (25)
Քաղաքացիների ծախս	3	3 (9)	5 (15)	5 (15)	2 (6)
Քաղաքացիների համար այլ օգուտներ	3	1 (3)	3 (9)	5 (15)	1 (3)
Ընդամենը միավոր՝		10 (42)	12 (44)	14 (50)	11 (51)

3. Ցուցադրական օրինակ

Հետևյալ օրինակն ավելի մանրամասն ընդգծում է, թե ինչպես են ԲԶՎ-ի քայլերը կիրառվում:

Ենթադրենք, կառավարությունը որպես գլխավոր նպատակ սահմանել է քաղաքապետարանի աղբահանման կառավարման քաղաքականության ուժեղացումը¹⁷: Բացահայտվել են հետևյալ տարբերակները.

- **Տարբերակ 1:** Ընդլայնել աղբահավաքման ծառայությունները քաղաքի բոլոր համայնքներում: Կապիտալ ծախսերը գնահատվել են 5 միլիարդ ՀԴ, և ենթադրվում է, որ գործառնական ծախսերը «բարձր» են:
- **Տարբերակ 2:** Վերացնել բոլոր անօրինական աղբանոցները: Կապիտալ ծախսերը գնահատվել են 50 միլիարդ ՀԴ, մինչդեռ ենթադրվում է, որ գործառնական ծախսերը «շատ ցածր» են:

Եթե յուրաքանչյուր տարբերակի օգուտները դժվար է տարբերակել և արտահայտել քանականան արժեքներով ու միայն մեկ ծախսի տեսակն (կապիտալ ծախս) է դեռ արտահայտվել դրամական արժեքով, իսկ գործառնական ծախսերն արտահայտվել են որակական արժեքներով, ապա ԲԶՎ մոտեցման կիրառումը կարող է օգնել սահմանել երկու տարբերակների առաջնահերթությունը:

Մեր օրինակում, առողջապահական օգուտները, օրինակի համար, կարող են լինել ամենակարևորը ստորերկրյա ջրերի աղտոտման, փոշու, աղմուկի, վնասատուների և հարևանությամբ տհաճ հոտի առկայության ազդեցություններին ենթարկված համայնքների համար, մինչդեռ, ավելի հեռավոր համայնքների համար, որոնք ուղղակիորեն չեն ենթարկվում առողջապահական և շրջակա միջավայրի բացասական ազդեցությանը, ամենակարևորը կարող են լինել ծախսերը:

Կշռումը և միավոր համակարգի սահմանումը կարող են իրականացվել ստորև ցուցադրված Վանդակ Ա.5-ի օրինակով:

¹⁷ Օրինակը վերցված է Համաշխարհային բանկի տեղեկագրքից՝ «Քաղաքապետարանի աղբահանության կառավարման ռազմավարական պլանավորման տեղեկագիրք»՝ գրված 2003 թ-ին Դարիուս Կոբուսի կողմից:

Վանդակ Ա.5 – Չափանիշների դասակարգումը «կշռման» համակարգի միջոցով

Յուրաքանչյուր չափանիշի հարաբերական կարևորությունը կարելի է որոշել՝ խնդրելով շահառուներից յուրաքանչյուրին միայն մեկ անգամ ընտրել այն չափանիշները, որոնք նրանք համարում են ամենօգտակարը: Լավ փորձը ցույց է տալիս, որ չափանիշների մոտ 60 տոկոսը ընտրելը ճիշտ է: Օրինակ՝ եթե առկա է 15 չափանիշից բաղկացած ցուցակ, յուրաքանչյուր մասնակցին թույլատրեք կատարել ինն ընտրություն: Հաջորդ քայլը՝

- հանեք ցուցակից այն չափանիշները, որոնց միավոր չի տրվել և
- յուրաքանչյուր չափանիշը բաժանեք ամենացածր միավորով չափանիշի վրա, այնպես որ այդ մեկը ստանա «1» կշիռը:

Օրինակ, եթե ամենացածր չափանիշը գնահատվել է 5 միավոր, և ամենաբարձր չափանիշը գնահատվել է 20, ապա ամենացածր չափանիշը կստանա $5/5=1$ կշիռը, իսկ ամենաբարձր չափանիշը՝ $20/5=4$ կշիռը:

Այնուհետև պետք է սահմանել գնահատման համակարգ քանակական արժեքներ կիրառելու համար այնտեղ, որտեղ հնարավոր է: Նման արժեքներն ընդգրկում են ֆինանսական միավորներ, ֆիզիկական միավորներ, ինչպիսիք են՝ աղտոտվածության նվազումը, պաշտպանվող կենդանատեսակները և այլն: Եթե դա հնարավոր չէ անել, իսկ դեպքերի մեծամասնությունում դա հնարավոր չի լինի, տվեք որակական արժեքներ՝ ցածրից բարձր սահմանված արժեքային սանդղակով (օրինակ՝ «0», «ցածր», «միջին», «բարձր»):

Ստորև ներկայացված աղյուսակում տրված է միավորների համակարգի սահմանումը.

Աղյուսակ Ա.5 – Գնահատման համակարգի մշակում

Չափանիշ: Գնահատված ընդհանուր ծախսեր (ՀԴ)	
> 100 միլիարդ	Գնահատական 1
50 միլիարդ – 100 միլիարդ	Գնահատական 2
20 միլիարդ – 50 միլիարդ	Գնահատական 3
< 20 միլիարդ	Գնահատական 4
Չափանիշ: Շահառու (կամ ազդեցության ենթարկված) բնակչության չափը (ամբողջ բնակչության %)	
0 – 25 %	Գնահատական 1
25 – 50 %	Գնահատական 2
50 – 75 %	Գնահատական 3
75 – 100 %	Գնահատական 4
Բնապահպանական օգուտներ	
Ոչ մի	Գնահատական 1
Ցածր	Գնահատական 2
Միջին	Գնահատական 3

Բարձր	Գնահատական 4
Չափանիշ: Սոցիալական ընդունելիության ինդեքս	
Ոչ մի	Գնահատական 1
Ցածր	Գնահատական 2
Միջին	Գնահատական 3
Բարձր	Գնահատական 4

Վերադառնանք աղբահանման քաղաքականության մեր օրինակին և ենթադրենք, որ չափանիշների կշռումն այնպիսին է, ինչպես ցուցադրված է ստորև ներկայացված աղյուսակում.

Աղյուսակ Ա.6 – Չափանիշների կշռում

Չափանիշներ	Կշիռ
Գնահատված ընդհանուր ծախսեր	4.8
Սոցիալական ընդունելիության ինդեքս	3.5
Բնապահպանական օգուտներ	3.0
Շահառու բնակչության քանակը	1.0

Հնարավոր է նաև տեղաբաշխել միավորները և կշիռներն ու հաշվել երկու տարբերակների հարաբերական վարկանիշը:

Աղյուսակ Ա.7 – Տարբերակների համեմատություն

Չափանիշ	Ընդհանուր ծախսեր (կշիռ 4.8)	Բնապահպանական օգուտներ (կշիռ 3.0)	Բնակչության չափ (կշիռ 1.0)	Սոցիալական ընդուն. ինդեքս (կշիռ 3.5)	Արդյունք
Տարբերակ					
Ընդլայնել աղբահավաքումը	(4x4.8) 19.2	(3x3.0) 9.0	(1x1.0) 1.0	(4x3.5) 14.0	43.2
Վերացնել բոլոր անօրինական աղբանոցները	(2x4.8) 9.6	(4x3.0) 12.0	(2x1.0) 2.0	(3x3.5) 10.5	34.1